

ՍՈՒՐԻՈՅ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. «ՊՍԱԿԱՃԵՒ ԺԱՅՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՎՃԱՐ Է»

Չորեքշաբթի, 15 Ապրիլ 2020-ին, Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութիւնը յայտնեց, որ Դամասկոսի համաճարակի տարրալուծարանը կ'ընդգրկէ պսակածէ ժահրի քննութեան յատուկ PCR գործիքներ, որոնք օրական աւելի քան 100 քննութիւն կը կատարեն կասկածելի պարագաներուն, շեշտելով, որ պսակածէ ժահրի քննութիւնը անվճար է: Նախարարութիւնը հաստատեց, որ PCR գործիքները կը գտնուին Նաե



Րալէայի, Լաթաքիոյ եւ Զոմսի յատուկ տարրալուծարաններէն ներս, յայտնելով, որ պսակածէ ժահրի քննութիւնը տեղի կ'ունենայ լորձուկի քննութեան միջոցով: Նախարարութիւնը յայտնեց, որ քննութեան տեւողութիւնը աւելի քան հինգ ժամ է, եւ քննութեան արդիւնքը պսակածէ ժահր ցոյց տալէ ետք լորձուկը կը վերաքննուի, այս փուլը կը կոչուի արդիւնքի հաստատման փուլ:

ՍՈՒՐԻՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՐՏՈՆԵՅ ԿԱՐԳ ՄԸ ԱՐՇԵՍԱՆՈՅՆԵՐՈՒ ԲԱՅՈՒՄԸ

Երկուշաբթի, 13 Ապրիլ 2020-ին, տեղական աղբիւրներ յայտնեցին, որ Երեքշաբթի օրուընէ սկսեալ Սուրիոյ կառավարութիւնը թոյլ պիտի տայ գիւղատնտեսական ինքնաշարժներու եւ բեռնատարներու սորոգութեանց վերաբերող արհեստներուն, գիւղատնտեսական գործիքներ վաճառողներուն, երկաթագործներուն, ատաղձագործներուն, դերձակներուն գործի վերադարձը, պայմանաւ որ անոնք յարգեն կառավարութեան հաստատած շրջագայութեան արգիլման ժամերը եւ խանութներէն կամ արհեստանոցներէն ներս խճողում չստեղծեն:



14 Ապրիլին, տեղական աղբիւրներ յայտնեցին, որ Չորեքշաբթի օրուընէ սկսեալ Սուրիոյ կառավարութիւնը, Նոյն պայմանով, թոյլ պիտի տայ Նաե ոսկերիչներու, պաղլեղածին (ալումինիում) եւ ապակի գետեղող արհեստաւորներու, արտադրական գործիքներ վաճառողներու, երթելու կարգի ինքնաշարժներու ծառայութեան գրասենեակներու, քիչաչաչին հեռաձայններ սորոգողներու եւ բանալեգործներու աշխատանքը պայմանաւ որ անոնք յարգեն կառավարութեան հաստատած շրջագայութեան արգիլման ժամերը եւ խճողում չստեղծեն:

ՉԻՆԱՍՏԱՆԵՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՊԻՏՈՅՔ ՏԵՂԱԾՈՒՄՈՂ ՕՂԱՆԱՒ ՄԸ ՂԱՄԱՍԿՈՍ ԺԱՄԱՆԵՅ

Չորեքշաբթի, 15 Ապրիլ 2020-ին, «Շամ Թայմ» կայքը հաղորդեց, որ սուրիական օդանաւային ընկերութեան ընդհանուր տնօրէն Պասեմ Մանսուր յայտնած է, որ քաղաքացիական թռիչքները ներկայիս դադարած են, բացի շտապ օգնութեան եւ Զամաշխարհային Առողջապահութեան Կազմակերպութեան անչուող թռիչքներէն: Մանսուր յայտնեց, որ Չորեքշաբթի, 15 Ապրիլի առաւօտեան, Չինաստանէն օդանաւ մը ժամանեց Դամասկոսի Միջազգային օդակայան: Օդանաւը բեռնուած էր պսակածէ ժահրի բուժման ծառայող բժշկական սարքաւորումներով: Մանսուր շեշտեց, որ օդակայանի բոլոր բաժինները, ներառեալ հիւրանոցը եւ օդանաւերը օրական դրութեամբ կը հականեխուին: Ան աւելցուց, որ օդակայանի պատասխանատու մարմինները բոլոր միջոցները ի գործ կը դնեն օդակայանի պաշտօնեաներուն եւ օդանաւորողներուն պսակածէ ժահրէն զերծ պահելու համար, նկատի առնելով, որ օդակայանի իւրաքանչիւր բաժինի սակաւաթիւ պաշտօնեաներ կը շարունակեն իրենց աշխատանքը:



Չորեքշաբթի, 15 Ապրիլին ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Զայրապետը Արցախի Զարութիւնեան խորհուրդի վստմաշուք Նախագահի տիար Արայիկ Յարութիւնեանին ուղղած Նամակով մը շնորհաւորեց անոր ընտրութիւնը:

ԱՐՃԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ ԸՆՏՐՈՒԿԸ Է ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. ԱՆ ՄՏԱՅԱԾ Է ԶԱՅՆԵՐՈՒՆ 88%-Ը, ՄԱՍԻՍ ՄԱՅԻՆԵԱՆԸ՝ 12%-Ը

Արցախի Զանրապետութեան Կեդրոնական Ընտրողական Յանձնախումբը կը տեղեկացնէ, որ Նախնական տուեալներով, հանրապետութեան Նախագահի ընտրութիւններուն 2-րդ փուլին մասնակցած է 47.165 ընտրող:



Աւելցնենք, որ պայքարը կ'ընթանար Նախագահական ընտրութիւններուն առաջին փուլին աւելի շատ քուէ ստացած թեկնածուներէն երկուքին՝ Արայիկ Յարութիւնեանին եւ Մասիս Մայիլեանին միջեւ: Զուեարկութեան առաջին փուլին Արայիկ Յարութիւնեան ստացած էր 36.076 քուէ (49.26 տոկոս), Մասիս Մայիլեանը՝ 19.360 քուէ (26.4 տոկոս):

Արայիկ Յարութիւնեան ընտրուած է Արցախի Զանրապետութեան Նախագահ, ան ստացած է 39.860 ձայն, իսկ Մասիս Մայիլեանը՝ 5.428 ձայն:

Աւելցնենք, որ 31 Մարտին տեղի ունեցած Նախագահական ընտրութիւններու արդիւնքներուն համաձայն, ոչ մէկ թեկնածու կրցած էր ապահովել անհրաժեշտ քուէն:

Զայաստանի Զանրապետութեան Նախագահ Արմէն Սարգսեան հեռաձայնային հաղորդակցութեամբ շնորհաւորած է Արայիկ Յարութիւնեանը՝ Արցախի Նախագահի ընտրութիւններու երկրորդ փուլին յաջողութեան համեմունքով եւ Արցախի Զանրապետութեան Նախագահի բարձր պաշտօնին ընտրուելուն առիթով:

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ԸՆՈՐՇԱԽՐԷ ՏԻԱՐ ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԻԲՐԷՒ ՆԱԽԱԳԱՅ ԱՐՃԱՆԻ ՇԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Չորեքշաբթի, 15 Ապրիլին ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Զայրապետը Արցախի Զանրապետութեան խորհուրդի վստմաշուք Նախագահի տիար Արայիկ Յարութիւնեանին ուղղած Նամակով մը շնորհաւորեց անոր ընտրութիւնը:

Իր Նամակին մէջ Զայրապետը յատկապէս ըսաւ. «Արցախի Զանրապետութեան ամրացումը, հայոց բանակի հզօրացումը եւ տնտեսութեան զարգացումը մեր Սուրբ Աթոռին համար միշտ եղած են առաջնահերթ յանձնառութիւն: Անցնող տարիներու ընթացքին, մեր յանձնառութիւնը գործի վերածող ծրագիրներ մշակած ենք, թէ՛ Կաթողիկոսարանը ուղղակիօրէն, եւ թէ՛ իր թեմերուն ճամբով: Կը վըստահեցնենք Ձեզ, որ Նոյն ոգիով պիտի շարունակենք գործնապէս մասնակից դառնալ Արցախի առաւել հզօրացման աշխատանքներուն»:



Խմբագրական

ՄԵՐ ՅԱՆՁՆԱՌՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Սուրիական պատերազմի թոհուրոհը ժողովուրդին ծառայելու յանձնառությունը իր ետին ձգած սուրիահայ երիտասարդությունը այս անգամ պսակած է ժառանգորդի տաղանակին մեջ յանձնառու աշխատանք կը ստանձնե՝ առանց դժկամելու:

Մեր համայնքին հիմնական ուժն է կազմակերպուած ու ազգային դաստիարակութեամբ տոգորուած երիտասարդութիւնը, որուն կարելի է վստահիլ ոչ միայն աշխատանք ու ծառայութիւն, այլև ղեկավարութիւն, ծրագրաւորման ու վերանորոգման աշխատանք: Ան է որ կը յուսադրէ, նոր թափ կուտայ համայնքէն ներս տարուող բազմաբնոյթ աշխատանքներուն:

Այս երիտասարդութիւնն է, որ հանրային մեր գործունէութեան, ազգային կեանքի ամենէն կարեւոր գործին՝ ազգային առողջ դաստիարակութեան բովէն անցած է ու համայնքի կեանքին ամենէն բախտորոշ փուլերուն գործ ստանձնած է կամաւորաբար:

Երիտասարդութիւն, որուն համար ազգային իտեալները վերացական արժէքներ չեն, անոնք մարմին կ'առնեն ամենէն համեստ աշխատանքներով ու կը բիրեղանան հաւաքական մեր շահերուն հետապնդման հաւատարմորէն գործերով:

Հաւատքէն կը ծնի անոնց գործը եւ գործն է որ կը սպասարկէ հաւատքին, իտեալին: Այլապէս ի՞նչ իմաստ պիտի ունենային հաւատքն ու իտեալը, եթէ որեւէ հաւաքականութիւն ընդունակ չըլլար կերտելու իր ազգային դիմագիծով ու ոգիով հպարտ երիտասարդութիւն:

Այսպիսի երիտասարդութիւնն է, որ ոչ թէ ազգային նեղմտութեան մէջ սեղմած է իր ողջ ներուժը, այլև իր ազգային արժէքները պայծառացնելով կը կերտէ նորարարութիւնը, վստահելով իր ուժերուն, գերծ մնալով այլասերիչ գաղափարախօսութիւններէ՝ գերազանցօրէն աշխարհաքաղաքացիութիւն ու անհատապաշտութիւն ջատագովող ներկայ մեր դարուն:

Այս դաստիարակութիւնը իր վեմը համարելով այսօր կրկին պատնէշի վրայ է մեր երիտասարդութիւնը: Ապրելով համաճարակի բոլոր դժուարութիւնները կը ծառայէ հաւաքականութեան: Հայկական կեդրոններուն մէջ ներկայ է օր ու գիշեր, կը հասնի մեր ժողովուրդի գաւակներուն, յատկապէս այս պայմաններուն մէջ անել կացութեան մատնուած տարեցներուն, անոնց առողջապահութեան եւ սնունդի ապահովման նպաստելով, համաճարակի տարածումը կանխելու համար իր կեանքն իսկ վտանգելով, մեր կեդրոններն ու եկեղեցիները հականեխելով, յարգելով համաճարակի դիմագրաման բոլոր կանոնները, ուղղելով նաեւ մեր ժողովուրդը, որպէսզի ան գիտակցութեան բարձր մակարդակ դրսեւորէ եւ իր իսկ օրինական ընթացքով նպաստէ համաճարակի յաղթահարման:

Մեր երիտասարդութիւնն ալ ունի դժուարութիւններ, տնտեսական ծանր պայմաններու մէջ կը գոյատեւէ, ունի ընտանիք, կասեցուած է իր ալ աշխատանքն ու ուսումը: Այդուամենայնիւ, այս փուլին, ան յանձնառութեամբ ու գիտակցութեամբ վեր դասած է հաւաքական կեանքին ծառայութիւնը, որովհետեւ քաջ գիտէ, որ ծառայութեան իր օրինակով պիտի ապահովագրէ հաւաքական մեր կեանքին ամրագրումը եւ ապագայ կենսունակութիւնը:

Ձեր վարձքը կատար, կամաւոր ծառայողներ:

«Գ.»

-Երեքշաբթի, 14 Ապրիլ 2020-ի երեկոյեան, Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութիւնը յայտարարեց, որ Սուրիոյ մէջ պսակած է ժառանգորդ վարակուող 4 նոր պարագաներ արձանագրուած են:



Այսպիսով Սուրիոյ մէջ պսակած է ժառանգորդ վարակուողներուն թիւը կը հասնի 29-ի, որոնցմէ 2-ը մահացան իսկ 5-ը բուժուեցան:

-Սուրիոյ առողջապահութեան նախարար տոքթ. Նիզար Եազճի, Չորեքշաբթի, 15 Ապրիլին, մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնեց որ Սուրիոյ առողջապահութեան ոլորտը պատրաստ է բժշկական ամբողջական քննութիւն կատարելու պսակած է ժառանգորդ վարակուած պարագաներու եւ նպաստելու անոնց բուժման, առողջապահական համապատասխան մեկուսարաններ տրամադրելով անոնց:



Նախարարը յիշեց, որ ներկայ տուեալներով սուրիական համապատասխան հիւանդանոցներու մէջ գոյութիւն ունի 1000 անկողին, պսակած է ժառանգորդ վարակուողներուն տրամադրելու, դիտել տալով որ մեծ դժուարութիւն կայ արհեստական շնչառութեան գործիքներ ապահովելու՝ ինը տարիէ ի վեր Սուրիոյ պարտադրուած միակողմանի պատիժներուն հետեւանքով:

Նախարարը յայտնեց նաեւ, որ պսակած է ժառանգորդ քննութեան համար տարրալուծարաններ կը գործեն Դամասկոսի, Հալէպի, Լաթաքիոյ եւ Հոմսի մէջ, որոնց իւրաքանչիւրը օրական 100 քննութիւն կատարելու կարելիութիւն ունի: «Ներկայիս աշխատանք կը տարուի այդ քննութիւններուն թիւը բարձրացնելու 200-300-ի», եզրափակեց նախարարը, դիտել տալով որ քննութիւնները անվճար են:

- Լաթաքիոյ մէջ, պսակած է ժառանգորդ վարակուած առաջին քայլերուն հետ, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Թաղականութիւնը յառաջացուց շտապ օգնութեան յանձնախումբ մը, որ անմիջապէս անցաւ ծառայողական աշխատանքի: Յանձնախումբը բժշկական անհրաժեշտ կարիքներու



համար կապ հաստատեց նահանգի Առողջապահութեան գրասենեակին հետ եւ մեր ժողովուրդին տրամադրութեան տակ դրաւ հիւանդանոցներու, բժիշկներու եւ շտապ օգնութեան կեդրոններու հեռաձայնի թիւեր: Այնուհետեւ յայտարարութիւններով ժողովուրդը իրագրեց դարձուց պսակած է ժառանգորդ վարակուած էին Լաթաքիոյ ակումբը, դպրոցը եւ եկեղեցին:

Այս շրջանին փակուած էին Լաթաքիոյ ակումբը, դպրոցը եւ եկեղեցին: Արարողութիւնները առցանց կը սփռուէին:

Յանձնախումբը շարունակելով իր աշխատանքը հականեխեց հայկական կարգ մը կեդրոններ, ինչպէս եկեղեցին, ակումբը եւ հոգետունը, սնունդակողովներ, դեղեր, հականեխիչ նիւթեր, ձեռնոցներ բաշխեց ընտանիքներու, գործակցելով բարեփրական կազմակերպութիւններու հետ:

Նոյն օրերուն, ՀԱԸՄ-ի արի-արեւոյշները եւս ծառայողական աշխատանքի ձեռնարկեցին, հականեխեցին կարգ մը կեդրոններ եւ ժողովուրդը համացանցի ճամբով իրագրեց դարձուցին նախագուշակական բազմապիսի քայլերու:

- Նկատի ունենալով պսակած է ժառանգորդ համաճարակէն նախագուշակական Սուրիոյ կառավարութեան որոշումներն ու դպրոցներուն եւ հա-



մալսարաններուն փակուիլը, Համագայիկի Սուրիոյ Հայագիտական Հիմնարկը իր դասաւանդութիւնները փոխադրեց առցանց հարթակ: Հիմնարկի դասախօսները հերթաբար իրենց աշակերտներուն ուղիղ սփռումով կը հրամցնեն շաբթուան դասանիւթերը:

Լուրեր Հայաշխարհին

ԴԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆ. «ԱՊԱԳԱՆ ՊԵՏԸ Է ԿԱՌՈՒՅՈՒԻ ԱՐԹՈՒԻ ՄԿՐՏՉԵԱՆԻ ՆԱԽԱՆՇԱԾ ՈՒՂԻՈՎ»

ՀՀԴ Արցախի Կեդրոնական Կոմիտեի եւ ՀՀԴ Ստեփանակերտի «Արթուր Մկրտչեան» Կոմիտեի կողմից անդամներ, կուսակցական ընկերներ, հարազատներ 14 Ապրիլին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագոյն Խորհուրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչեանի մահուան 28-րդ տարեկիցին առիթով Ստեփանակերտի քաղաքային յուշահամալիրայցեցին, անոր շիրիմին ծաղիկներ գետեղեցին եւ անոր յիշատակը յարգեցին:



Արթուր Մկրտչեանը Արցախի նորաստեղծ պետականութիւնը ղեկավարած է ընդամենը 97 օր, սակայն իր քաղաքական ու մարդկային բացառիկ յատկանիշներուն շնորհիւ ան անջնջելի դրոշմ ձգած է Արցախի Լորագոյն պատմութեան մէջ:

ՀՀԴ Արցախի Կեդրոնական Կոմիտեի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեանի համաձայն, Արթուր Մկրտչեանի կերպարը, անոր անցած ուղին ու գործունեութիւնը կը նախանշեն մեր պետականութեան ապագայի ուղեգիծը:

«Խորհրդանշական է, որ այսօր՝ 14 Ապրիլին Արցախի մէջ կ'ընտրուի հանրապետութեան նախագահ: Արթուր Մկրտչեան քաղաքական գործիչին պատգամներն ու այսօրուան խորհուրդը ամբողջութեամբ այստեղ պետք է տեսնել: Ապագան պետք է կառուցուի Արթուր Մկրտչեանի նախանշած ուղիով, որմէ շեղելու պարագային, դատապարտուած կ'ըլլանք մեր ապագայ յաջողութիւնները մեզմէ հեռու տեսնելու ճակատագիրին», յայտնեց Դաւիթ Իշխանեան:

ԱՄԱՆՊԱԿԱՆ ԶԱՇԵՐՈՎ ԵՐԹԸ ԱՅՆ ԳԱՐՓԱՐՈՎ ՊԻՏԻ ՓՈԽԱՐԻՆՈՒԻ

«Երկիր».- Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակին, Շուշիի ազատագրման եւ Հայրենական մեծ պատերազմին տարած յաղթանակի օրերուն առիթներով տեղի ունենալիք նախաձեռնութիւններուն պիտի սահմանափակուի քաղաքացիներու մասնակցութիւնը, պսակաձեւ ժահիր տարածումը կանխարգիլելուն ուղղուած քայլերուն լոյսին տակ: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտնած է. «24 Ապրիլին, 8 եւ 9 Մայիսին տեղի պիտի ունենան միայն արարողակարգային նախաձեռնութիւններ, զանգուածային նախաձեռնութիւններ պիտի չըլլան»:



Իսկ թէ 23 Ապրիլին ՀՀԴ-ի նախաձեռնութեամբ ամեն տարի տեղի ունեցած Ջահերով երթը դէպի Ծիծեռնակաբերդ ե՞րև չեղեալ համարուած է, «Իրաւունքը» թերթը հետաքրքրուեցաւ ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեանին հարցնելով:

- Անանկական ջահերով երթը, որ վերջին 15-20 տարիներուն կատարած էինք, այս տարի նկատի ունենալով արտակարգ դրութիւնը, նաեւ մեր քաղաքացիներուն առողջութեան սպառնացող վտանգները, պիտի չընենք: Բայց փոխարինող քանի մը այլ գաղափարներ ունինք, զորս կը քննարկենք, եւ որոնք վերաբերեալ յառաջիկայ օրերուն յայտարարութեամբ հանդէս պիտի գանք: Այս տարին նաեւ 100-ամեակներու տարի էր Սեւրի պայմանագիրի 100-ամեակն է եւ քանի մը նախատեսուած նախաձեռնութիւններ ունենինք: Ինչպէս նաեւ մեծ շուքով պիտի նշենք 1 Մայիսը, բայց քանի որ իրավիճակը այսպիսին է, բոլոր զանգուածային նախաձեռնութիւնները յետաձգուած են:



Հրուհի Սարգսեան

ՀՀԴ ԵՐԵՒԱՆԻ ԶԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՈՓԵԿՈՉՄԱՆ ԲՈՒՐ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՍԱՐ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ «ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՅԱՆՉԵՄ» ՅՈՒՇԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ

ՀՀԴ Երեւանի Զաղաքային Կոմիտեն հետեւեալ հաղորդագրութիւնը հրապարակած է.

- արձագանգելով 24 Ապրիլին դիմատետրի վրայ (ֆէյսպուք) օգտատերերուն լուսանկարները յուշային յատուկ շրջանակով օժտելու կոչերուն,
- ամրագրելով 2015 թուականի 24 Ապրիլին ընդունուած համահայկական հռչակագիրին դրոյթները,



ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՅԱՆՉՈՒՄ

- շեշտելով ցեղասպանութեան յանցակազմին մէջ ընդգրկուած արարներու համար անպատիժ մնալու անթոյլատրելիութիւնն ու այդ յանցագործութեան վաղեմութեան ժամկետ չունենալու հանգամանքը,

- վերահաստատելով Հայաստանի եւ հայ ժողովուրդի յանձնառութիւնը՝ շարունակելու պայքարը ցեղասպանութիւններու կանխարգիլման եւ ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդներու եւ մասնաւորապէս հայ ժողովուրդին բարոյական, սիւթական եւ հողային իրաւունքները վերականգնումին համար,

Համաքաղաքացիներուն կ'առաջարկէ՝ օգտատերերու լուսանկարներուն վրայ անելցնել իր քարոզչական յանձնախումբին պատրաստած «Կը Յիշեմ Եւ Կը Պահանջեմ» յուշային շրջանակը:

Շրջանակը հասանելի է հայերէն, ռուսերէն, անգլերէն, ֆրանսերէն եւ արաբերէն լեզուներով:

2020-Ի ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՏԵԱԿԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄՇ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՕՐՔԵՐԸ ԿԱՆԽԱԾ ԵՆ ՍԱՀՄԱՆԻ ԽԱՄՏՄԱՆ 20 ՓՈՐՁ

«Արմէնիբրես».- Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութեան մամլոյ կեդրոնէն յայտնեցին, որ ընթացիկ տարուան առաջին եռամսեակին, Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութեան սահմանապահ զօրքերուն կողմէ կանխուած է պետական սահմանի խախտման 20 փորձ, բացայայտուած է սահմանային դրութեան խախտման 13 դէպք՝ 29 անձերու մասնակցութեամբ:




Հաշուետու ժամանակաշրջանին պետական սահմանի անցման կետերուն վրայ յայտնաբերուած եւ սահմանուած կարգով Հայաստանի ոստիկանութեան յանձնուած է հետախուզման մէջ գտնուող 319 անձ:

www.kantsasar.com

www.kantsasar.com

www.kantsasar.com

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ



Յուլիկ Ղազարեան

Յատկապես սուրիական տագնապի սկիզբէն ի վեր սուրիական լիրային փոխարժեքը ամերիկեան տոլարին դիմաց մեր առօրեայ խօսակցութիւնները գրաւող նիւթերէն մէկը եղաւ: Յաճախ, Նոյնիսկ առանց հիմքի կարծիքներ կը յայտնենք անոր շուրջ, երբեմն մեղադրելով, երբեմն գովաբանելով սուրիական կառավարութիւնը: Սակայն ինչպէ՞ս կ'որոշուի դրամանիշի մը փոխարժեքը, կամ ի՞նչ գործօններ կ'ազդեն անոր վրայ:

Պետութիւններ կ'ունենան երկու տեսակ տնտեսական քաղաքականութիւն, առաջինը՝ պիտոճեական քաղաքականութիւն է, որ կառավարութիւններու տուրքերու մուտքին եւ անոր ծախսերուն միջեւ ստեղծուած հաւասարակշռութիւնն է, նպաստելու համար պետական հատուածի գոյատեւման ու զարգացման: Ան նաեւ երկրի տնտեսական տարբեր հատուածներուն միջեւ մրցունակութիւն եւ տնտեսական տոկոսային աճ ստեղծող քաղաքականութիւնն է: Երկրորդը՝ դրամային քաղաքականութիւնը, տուեալ երկրին կեդրոնական դրամատան դրամի մատակարարման քաղաքականութիւնն է, որուն նպատակն է երկրի դրամանիշին արժեքին պահպանումը եւ դրամի աշխույժ շրջանառութիւնը ապահովել: Երկրի մը ընդհանուր տնտեսական քաղաքականութիւնը վերոյիշեալ երկու քաղաքականութիւններուն համահունչ ընթացքն է, նպատակադրելով ստեղծել կայուն աճ արձանագրող տնտեսութիւն:

Ամերիկայի 1927-ի տնտեսական տագնապէն մեկնելով, 1944-ին Պրեթն Ուուտի համաձայնագրին համեմատ ամերիկեան տոլարին փոխարժեքը կապուեցաւ ոսկիին արժեքին, ուր ոսկիին մէկ կրամը համազօր էր մէկ ամերիկեան տոլարի: Օրուան իշխանութիւնները այս քայլին դիմեցին կայուն պահելու տոլարին փոխարժեքը եւ պաշտպանելու համար տնտեսական աճը սղաճէն: Սակայն, ժամանակի ընթացքին բացայայտուեցաւ, որ դրամանիշին փոխարժեքը մէկ գործօնի կապելով, տնտեսութիւնը կը կորսնցնէ իր ճկունութիւնը եւ դրամանիշին փոխարժեքը չի կրնար քայլ պահել տնտեսական աճին կամ անկումին հետ: Հետեւաբար 1971-ին, Միացեալ Նահանգներու օրուան նախագահ Նիքսոնի ցնցիչ յայտարարութեամբ (Nixon shock) քակուեցաւ այդ կապը եւ միջազգային տնտեսութիւնը թեւակոխեց Նոր փուլ մը, որ կը կոչուի քանակական դրամային քաղաքականութիւն (quantitative finance), որուն շնորհիւ կեդրոնական դրամատուներուն վստահուեցաւ առաւել մեծ դերակատարութիւն տնտեսական գործունեութեան մէջ:

Կեդրոնական դրամատուներուն սղաճին դէմ պայքարելու

միջոցներէն մէկն է դրամանիշի գիշերային տոկոսի (overnight rate) բարձրացումը, որ կը նպաստէ կանխիկ դրամը շուկայէն վերացնելու եւ կեդրոնացնելու դրամատուներուն մէջ: Այս մէկը կը կոչուի դրամային պիրկ քաղաքականութիւն: Փախարենը՝ պիտոճեական քաղաքականութեան շրջագիծէն ներս, Նոյն նպատակին համար կառավարութիւններ տուրքերը կը բարձրացնեն: Հոս է, որ տնտեսութիւնը վերածուի քաղաքականութեան եւ քուերակողները, անոնց դասակարգային խաւն ու բաժանումները մեծ ազդեցութիւն կ'ունենան կառավարութիւններու տնտեսական որոշումներուն վրայ:

Տնտեսական ճգնաժամային պայմաններուն մէջ, դրամատուները կը հակին տոկոսները նուազեցնելու, նպաստելու համար կանխիկ դրամին հոսքին դէպի շուկաներ, աշխուժացնելով դրամի շրջանառութիւնը, որովհետեւ տնտեսական անկումի պատճառով, մարդիկ աւելի ապահով կը նկատեն կանխիկ դրամը պահելը, քան զայն շրջանառութեան մէջ ղնելը, հետեւաբար դրամի պահանջը կ'աւելնայ, դրամանիշի փոխարժեքը կը բարձրանայ եւ կը ստեղծուի դրամի արժեքաւորում (deflation): Այս երեւոյթը պատերազմի շրջանին սուրիական լիրայի փոխարժեքի անկումը դանդաղեցնող ազդակներէն մէկն էր:

Վերոյիշեալ երկու երեւոյթները՝ սղաճ (inflation) եւ դրամի արժեքաւորում (deflation), հաւասարապէս վտանգաւոր են տնտեսական կայունութեան վրայ, սակայն աւելի վտանգաւոր տարբերակն է stagflation-ը, ուր տնտեսական անկումին ու անզորութեան հետ կու գայ սղաճը, ինչ որ այսօր կը պատահի Սուրիոյ մէջ:

Հակառակ այս բոլորին, այսօր չկայ երկիր մը, որքան ալ զարգացած ըլլայ անոր տնտեսութիւնը, որ ամբողջովին անկախ ըլլայ այլ երկիրներու տնտեսութիւններէն, որովհետեւ այսօր, աշխարհի տնտեսութիւնները կ'ապրին փոխադարձ կապուածութեան վիճակ, ուր թէկուզ տարբեր համեմատութիւններով միասին աճ կ'արձանագրեն կամ անկում կ'ապրին: Այս երեւոյթին ամենէն մեծ օրինակն է 2009-ի դրամական-տնտեսական տագնապը, որ Միացեալ Նահանգներէն ծայր առնելով հասաւ աշխարհի գրեթէ բոլոր երկիրները, թէկուզ տարբեր տոկոսներով: Անկէ անմասն չմնաց նաեւ սուրիական տնտեսութիւնը, որ հակառակ անոր որ այդ ժամանակաշրջանին կ'ապրէր բարգաւաճ փուլ, Սուրիոյ կեդրոնական դրամատուները ստիպուեցաւ տոկոսները նուազեցնել, քայլ պահելու համար միջազգային տնտեսութեան հետ: Փոխադարձաբար, երբ զարգացած տնտեսութիւններ սկսան բարելաւուիլ եւ պիտի ար-

ձանագրեն Նոր աճ, բարձրացող տնտեսութիւններու (emerging economies) մէկ քայլ ետ մնալը, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու դրամային քաղաքականութեան ժխտական ազդեցութիւնը անոնց վրայ պատճառ դարձան, որ զարգացած տնտեսութիւններ չարձանագրեն պահանջուած աճը եւ ստիպուին հակառակ քաղաքականութիւն վարել:

Խոցելի իրականութիւնը այն է, որ Թուրքիա այսօր, հակառակ իր չափազանց անկայուն տնտեսութեան եւ դրամական անկումին, բարձրացող տնտեսութիւններու շարքին առաջատար դիրք կը գրաւէ արձանագրելով մօտաւորապէս 5% աճ, ինչ որ Թուրքիա կ'օգտագործէ սպառնալով մեծ պետութիւններուն, անոնցմէ քաղելու քաղաքա-

Պաշար ալ Ասատ անակնկալ յայտարարութեամբ մը եկաւ հաստատելու, որ հակառակ ինչ տարուան պատերազմի եւ տնտեսական, քաղաքական ու ռազմական ճնշումներուն, երկիրը ամբողջովին գերծէ արտաքին պարտքերէ: Այս ցնցիչ յայտարարութեան նպատակն էր կասեցնել սուրիական լիրայի փոխարժեքին անկումը օտար դրամանիշներուն դիմաց: Սակայն ան իր նպատակին չի ու լի չծառայեց, որովհետեւ նախագահին ցնցիչ յայտարարութեան կողքին, կեդրոնական դրամատուները չվարեց զուգահեռ ցնցիչ դրամական քաղաքականութիւն: Այսուհանդերձ, ազգային գաղափարաբանութեամբ առաջնորդող Սուրիոյ կառավարութիւնը, ամեն գնով կը պաշտպանէ երկրի խորհրդանիշները, ներառեալ սուրիա-



կան շահեր, որուն հետեւանքները առաւելաբար զգալի են Սուրիոյ մէջ: Սակայն գինովցած այս իրականութեամբ ինչպէս նաեւ 2016-ի ծախող յեղաշրջումին Երտողանի կարծեցեալ յարթանակով, Թուրքիոյ ներկայ իշխանութիւնները չեն անդրադառնար, որ մեծ պետութիւններ կ'աշխատին հետզհետէ գորգը քաշելու Երտողանի ոտքերուն տակէն, որովհետեւ անոնց համար այլեւս եական է Թուրքիոյ լարախաղացի քաղաքականութենէն վերջնականապէս ձերբագատիլը: Ահա այդ պատճառով է, որ թրքական լիրան անբացտրելի անկումներ կ'ապրի, վերջին ութ տարիներուն արձանագրելով աւելի քան 400% անկում ԱՄՆ տոլարին դիմաց:

Տնտեսական անկումի պտուտահողմը կասեցնելու համար, կեդրոնական դրամատուները եւ կամ կառավարութիւնները իրենց ունեցած այլընտրանքներուն կողքին, կը կիրարկեն շուկաները ցնցող մարտավարութիւն: Այս ցնցումի ալիքները կը նպաստեն ոչ միայն անկումի ընթացքը կասեցնելու, այլեւ զայն շրջելով տնտեսութիւնը առաջնորդելու դէպի աճ: Այս մղումով էր, որ 2019-ի Յոկտեմբերին Սուրիոյ նախագահ

կան լիրան եւ այնպէս ինչպէս հետամուտ է երկրի ամեն թիզ հողի ազատագրումին, այնպէս ալ մտադիր է վերականգնել երկրի ազգային տնտեսութիւնը, իմա՝ սուրիական լիրային փոխարժեքը, որովհետեւ անոր անկումը, որքան ալ ոմանց կարճ ժամկետի վրայ շահաբեր թուի, երկար ժամկետի վրայ կը սպառնայ երկրի տնտեսութեան:

Սուրիոյ դէմ սահմանուած պատժամիջոցներուն պատճառով օտար դրամանիշի հոսքը մեծ երկիրներէն դէպի Սուրիա ամբողջովին կասեցուած է: Հետեւաբար, տնտեսական աճի պարագային սուրիական տնտեսութիւնը պիտի վստահի դրացի երկիրներուն, ապահովելու համար օտար դրամանիշ: Մանաւանդ Հայկի եւ Դամասկոսի ամբողջական ազատագրումէն ետք սկսի գրառաւ տնտեսական վերաշխուժացում, բարձրացնելով օտար դրամանիշի պահանջը: Այս մէկը կրնայ յաւելեալ ճնշում ստեղծել արդէն իսկ ծանրաբեռնուած Լիբանանի տնտեսութեան վրայ: Ահա թէ ինչպէ՞ս կը բախին տարածաշրջանային եւ միջազգային քաղաքական հաշուարկները տնտեսական շահերուն հետ:

ՀԱՄԱԳՎԱՅԻՆԻ ԷՋ

ՀԱՄԱԳՎԱՅԻՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Հայ մշակույթը այսօր մեզի հասած է կտրելով դարերու ճամբայ, անցնելով բազմապիսի փորձություններէ: Սակայն անոնցմէ ոչ մէկը կրցած է կասեցնել անոր ընթացքը, շնորհիւ մշակույթի նուիրեալներուն: Այս հոգիով է, որ Համագային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը, իր աշխարհացրիւ կառոյցով ընդհանրապէս եւ Սուրիոյ շրջանը յստկապէս, որոշեց չանսալ ժամանակի պարտադրանքին, այլ՝ գործելաձեւը փոխելով հասնիլ ճգնաժամի մէջ գտնուող մարդկութեան:

Պսակածեւ ժահրի տարածման նախագրուական քայլերու շրջագիծէն ներս, 13 Մարտէն սկսեալ Սուրիոյ կառավարութեան որոշումով երկրի տարածքին մշակութային գործունեութիւնները դադարեցան՝ ցնոր տնօրինում: Այս իրավիճակի լոյսին տակ, մեկնելով միութեանս Կեդրոնական Վարչութեան ուղղութեամբ, Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը թելադրեց բոլոր մասնաճիւղերուն ու միաւորներուն աշխատանքի հարթակը փոխադրել դէպի թուայնացած աշխարհ, օգտուելով համացանցին ու ընկերային ցանցերուն ընձեռած դիւրութիւններէն: Յարմարութեան համեմատ, վարչութիւններուն մեծամասնութիւնը արձագանգեց այս թելադրանքին եւ յաջողեցաւ տանիլ ծաւալուն գործունեութիւն:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հակառակ ստեղծուած կացութեան Համագայինի Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը շարունակեց իր գործունեութիւնը, օգտուելով համացանցի ընձեռած կարելիութիւններէն:

Շրջ. Վարչութեան այս շրջանի գործունեութեան հիմնական առանցքը հանդիսացաւ պահպանել մասնաճիւղերուն ու միաւորներուն աշխուժութիւնը եւ ամեն կարելիութիւն ի գործ դնել անոնց առցանց գործունեութեան իրականացման, յատկապէս զարկ տալով քարոզչական բնագաւառին: Յիշեալ քարոզչականութեան իբր արդիւնք, իրականացան հետեւեալ աշխատանքները:-

1) ՄԱՍՆԱԾԻՂԵՐ

Ա. «ՆԻԿՈՒ ԱՐՔԱՆԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂ, ՀԱԼԷՊ

Մասնաճիւղի Գրական Յանձնախումբը արդէն իսկ սկսած էր մանկապատանեկան ասմունքի դասընթացը: Առողջապահական մեկուսացումէն ետք, դասընթացքի մասնակիցները համացանցային կապով շարունակեցին հետեւիլ իրենց ուսուցչուհիին՝ ընկի. Ռիթա Կադեան-Տիքայիքեանի ցուցմունքներուն եւ իրենց պատրաստած ասմունքները ներկայացնել մասնաճիւղի դիմատետրի էջին միջոցաւ:



Այցելելով մասնաճիւղի դիմատետրի էջը «Hamazkayin Ն. Արքալեան» հասցեով, կրնաք հետեւիլ անոնց գեղեցիկ ասմունքին:

Բ. «ԱՐԵՏԻՍ ԱՅՈՐՈՆԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂ, ԳԱՄԻՇԼԻ

Երկար տարիներու բացակայութենէ ետք, 2020-ի Մարտ ամսուան ընթացքին, տեղւոյն Պատկան Մարմինն հետ համագործակցաբար, կարելի եղաւ վերակենդանացնել միութեանս Գամիշլիի «Արեթիս Ահարոնեան» երբեմնի մասնաճիւղը: Վարչութեան նշանակումին դժբախտաբար յաջորդեց ստեղծուած արտակարգ վիճակը, որուն լոյսին տակ նորակազմ վարչութիւնը սկսաւ տանիլ առցանց գործունեութիւն, դիմատետրի իր էջին վրայ գետեղելով հայ մշակույթի ու անոր անմահ գործիչներուն մասին հետքըրակական երկլեզու տեղեկութիւններ: Դիմատետրի վրայ մասնաճիւղին էջը կրնաք գտնել «Hamazkayin Kamishly» անուան տակ:

2) ՄԻԱՌՈՒՆԵՐ

Ա. «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՅԵԱՆ» ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հասցնելու համար երաժշտութեան ամոքիչ ուժը բոլորին, յատկապէս տիրող պայմաններու լոյսին տակ, «Բարսեղ Կանաչեան» երաժշտական դպրոցի վարչութիւնը առօրեայ հերթականութեամբ դիմատետրի իր էջին վրայ կը գետեղէ զանազան տարիքի իր աշակերտներուն կատարումները: Անոնք իրենց տուններէն իսկ հաղորդակից կը մասնաճիւղի տակաւն արուեստին եւ առցանց կը հետեւին իրենց ուսուցիչներուն ցուցմունքներուն: Ուշագրաւ էյատկապէս ծայնամարդութեան դասընթացքի աշակերտներուն մասնակցութիւնը, քոյրահունչ երգերով: Լսելու համար բոլոր երգերն ու նուագները, կրնաք հետեւիլ երաժշտականոցի դիմատետրի էջին, որ կը գործէ «Համագայինի «Բարսեղ Կա-



նաչեան» երաժշտական Դպրոց - Հալեպ» անուան տակ: Դատերագ մի ամենէն դժնդակ պայմաններուն տակ իր գործունեութիւնը շարունակած Համագայինի Հալեպի Հայագիտական Հիմնարկը չընկրկեցաւ նաեւ պսակածեւ ժահրին դիմաց: Շնորհիւ հիմնարկի տնօրէնութեան, ուսուցչակազմին, միաւորի վարչութեան եւ Շրջ. Վարչութեան աշխոյժ համագործակցութեան, կարելի եղաւ ստեղծել մատչելի առցանց համակարգ, որուն ընդմէջէն հիմնարկի դասաւանդութիւնները կը շարունակուին անխափան կերպով: Իրագեց ըլլալու համար հիմնարկի նորութիւններուն, կրնաք այցելել անոր դիմատետրի էջը «Համագայինի Հայագիտական Հիմնարկ» անուան տակ:

նաչեան» երաժշտական Դպրոց - Հալեպ» անուան տակ:

Բ. ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Դատերագ մի ամենէն դժնդակ պայմաններուն տակ իր գործունեութիւնը շարունակած Համագայինի Հալեպի Հայագիտական Հիմնարկը չընկրկեցաւ նաեւ պսակածեւ ժահրին դիմաց: Շնորհիւ հիմնարկի տնօրէնութեան, ուսուցչակազմին, միաւորի վարչութեան եւ Շրջ. Վարչութեան աշխոյժ համագործակցութեան, կարելի եղաւ ստեղծել մատչելի առցանց համակարգ, որուն ընդմէջէն հիմնարկի դասաւանդութիւնները կը շարունակուին անխափան կերպով: Իրագեց ըլլալու համար հիմնարկի նորութիւններուն, կրնաք այցելել անոր դիմատետրի էջը «Համագայինի Հայագիտական Հիմնարկ» անուան տակ:



Գ. «ԼԵՈՒՆ ՇԱՆՔ» ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻԱՌՈՐ

Առողջապահական մեկուսացման շրջանին, թատերական միաւորը յաջողեցաւ տանիլ առցանց բազմակողմանի գործունեութիւն:

1- Թատրոնի Միջազգային Օրը

Նշելու համար Թատրոնի Միջազգային Օրը, միաւորէն խումբ մը ընկերներ 27 Մարտին ընթերցեցին օրուան նամակը եւ տեսերիզը գետեղեցին միաւորի դիմատետրի էջին վրայ:

2- «Քորոնա Զարեակ» Մարտահրաւեր

Նախաձեռնութեամբ միաւորի վարչութեան, սիզբ առաւ «Քորոնա Զարեակ» մարտահրաւերը, որուն մասնակիցները կարճ տեսերիզի ընդմէջէն կը ներկայացնեն խրատական քառեակ մը, պայմանաւ որ ան սկսի «Քորոնա-քորոնա» արտայայտութեամբ: Մարտահրաւերը տակաւին կը շարունակուի եւ մինչեւ օրս անոր մասնակցած են աւելի քան 14 զանազան տարիքի անհատներ, տարբեր շրջաններէ՝ միաւորի անդամ թէ ոչ:



3- «Կար Ու Չկար» Յեքիաթներու Շարք

Օգտուելով բժշկական մեկուսացման շրջանէն, միաւորէն կարգ մը ընկերներ ձեռք բերին գծագրութիւններ շարժելու (animation) հմտութիւնը եւ սկիզբ առաւ «Կար Ու Չկար» մանկական հեքիաթներու շարքը, որուն ծիրէն ներս շաբաթական հերթականութեամբ կը ներկայացուին հայկական եւ օտար հեքիաթներ, իւրայատուկ բեմադրութեամբ:

4- Ծիծաղի Չաւէշտներ

Ստեղծելու համար դրական մթնոլորտ մեկուսացման պայմաններու մէջ, միաւորի վարչութիւնը յարմար գտաւ հերթականօրէն գետեղել նախկին ծիծաղի երեկոներէն հատուածներ, ինչպէս նաեւ ներկայ իրավիճակը ծաղրող զաւէշտներ:

Թատերական միաւորի գործունեութեան կրնաք հետեւիլ դիմատետրի միջոցաւ, ուր յատուկ էջ կը գործէ «Համագայինի Լեւոն Շանթ Թատերական Միաւոր» անուան տակ, ինչպէս նաեւ Youtube-ի կայանէն «Hamazkayin Taderagan»:

Դ. «ՉԱՒԱՐԵԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՂՈՆ

Նկատի առած, որ կառավարական սահմանափակումները չեն ներառեր շինարարական աշխատանքները, «Չաւարեան» մշակութային կեդրոնի վերանորոգման աշխատանքները կը շարունակուին, շէնքի Հոգաբարձութեան եւ Շրջ. Վարչութեան վերահսկողութեամբ: Այս շրջագիծէն ներս 6 Ապրիլին, Նոր Գիւղ կատարած իր այցելութեան ընթացքին թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան այցելեց նաեւ վերանորոգող կեդրոնը, մօտէն ծանօթացաւ աշխատանքներուն եւ օրինեց զանոնք: Այս մասին թղթակցութիւն լոյս տեսաւ «Գանձասար» շաբաթաթերթին մէջ:



ՉԱՏԿԱԿԱՆ ՕՐԵՐ

Ծաղկադարձի եւ Զրիստոսի յարութեան գոյգ տօներուն առիթով Շրջ. Վարչութիւնը, ինչպէս նաեւ մասնաճիւղերու եւ միաւորներու վարչութիւնները շնորհաւորական բացիկներ գետեղեցին իրենց դիմատետրի էջերուն վրայ:

Համագայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան Զարոզչական Կեդր. Յանձնախումբ

Ծննդեան 125-ամեակին առիթով

ԳՐԱԳԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿԵԱՆԵՆ ՅԱՄԵՑՈՂ ՏԱՔՈՒԿ ՇՈՒՆՉ ՄԸ... (Դ.)



Լեոն Շառոյեան

Նուրիկեանի պատմութեանը տեսակ մը մանրապատումներ են կարծես: Խճանկարներ: Այնքան խիտ ու սեղմ են անոնք, որ երբեմն երկու էջէ անդին չեն անցնիր: Կը զգաք որ հեղինակը կը մերժէ անելորդ գարդեր ու երկարաբանութիւններ, կը խուսափի մանրամասնութիւններէ եւ ընդլայնումէ:

Իր կարճ ու կտրուկ այս ոճը կը թուի թէ բնածին բան մը եղած է Նուրիկեանի մօտ, նպաստաւորուած՝ պատկերաւոր ու կենդանի լեզուով մը, նուրբ երգիծանքով եւ գուարթախոհութեամբ, ինչպէս նաեւ ճոխ բանաստեղծութեամբ, որ արդէն գլխաւոր զէնքն է որդէն գրողի: Ուշագրաւ է իր հետեւեալ հաստատումը. «Ինծի համար մեր լեզուն հրաշալի միջոց մըն է գրական ստեղծագործութեան. աւելի՛ հարուստ, քան անգլերէնը եւ ֆրանսերէնը, որոնց ծանօթացած եմ ուսանողութեանս տարիներուն ու յետոյ ալ՝ երկար տարիներով, մանաւանդ անգլերէնին»:


Խտութեան կողքին, իր գրականութեան միւս երկու յատկանիշներն են **պարզութիւնն ու իրապաշտութիւնը**: Փոքր չէ թիւը իր այն պատմութեանը, ուր հերոսներն մեկն ալ ինքն է՝ «Արմէն» անունին ետին պահուողած: Իր ինքնակենսագրական նօթերուն մէջ առիթով մը գրած է. «Իբրեւ գրող երբեք չեմ կրցած ձեռք գարնել շինծու նիւթերու: Կը գրեմ միայն՝ երբ սիրտս եւ ամբողջ էութիւնս լեցուած են նիւթով մը, որ փակուած է սրտիս մէջ, եւ որ կը ճշայ որպէսզի լոյս աշխարհի գայ թողոյն եւ գրչին ճամբով: Այլպէս երբեք պիտի չուզէի, պիտի չկարենայի գրել»:

Գրականագետ Մինաս Թեօլեօլեան իր «Դար մը Գրականութիւն» հատորին մէջ սապէս կը բնորոշէ Նուրիկեանի արուեստը. «Պարզ, անճիգ լեզուով մը եւ իր տիպարները միշտ իրենց հարազատ ապրումներուն ընդմէջէն սեւեռումի տակ անկէլու բծախնդրութեամբ՝ յաշողած է կենդանի ու մայուն վկայութեան վերածել գրական իր վաստակը»:

Բենիամին Նուրիկեան իր պատկառելի ուսուցիչին՝ Թիկատիկեանի նկատմամբ, պահեց միշտ անպարզագիծ սեր մը:

Ինչպէս տեսանք արդէն, 20-ական թուականներուն, Գոլումպիա համալսարանը անարտել կարճ ժամանակ անց, ան ձեռնամուխ եղաւ նահատակ գրագետին հոս-հոն ցրուած այլաբնոյթ գործերուն հաւաքման աշխատանքին, Նեցուկ ունենալով այդ օրերուն Ամերիկայի մէջ կազմուած Թիկատիկեանի Սանտրու Միութեան երախտագետ անդամները: Հին թերթերէ ու տարեցոյցներէ ժողովեց Թիկատիկեանի պատմութեանը, քրոնիկները, թա-

տերգութիւններն ու քերթուածները: Այս աշխատանքին մէջ իրեն մեծապէս օժանդակեց Վենետիկէն Հ. Արսէն Ղազիկեանն ալ: Մեկտեղեց նաեւ լուսանկարներ: Գաւառային դժուարիմաց բանտրու համար (որոնցմով կը վիստան Թիկատիկեանի գրութիւնները) կազմեց առանձին սիւնակներ ու տուաւ անոնց բացատրութիւնները: Այսպիսով, մէջտեղ եկաւ 700 էջանի հրաշալի մատեան մը, որ թերեւս «ամբողջական» չէր,



բայց որ լայն չափով մոռացումէ կը փրկէր գրողին վաստակը ու կոչուած էր անկորնչելի փառապասկ մը դառնալ Խարբերոյ Թիկատիկեանի (Խույլու) գիւղի մեծանուն գաւկիսի համար:

Այս գիրքը տպուեցաւ Նիւ Եորք, 1927-ին, այսինքն՝ Թիկատիկեանի նահատակութենէն ընդամենը 12 տարի ետք:

Ողջունելի՛, համբուրելի՛ աշխատանք՝ նախկին սաներու այս նախաձեռնութիւնը:

Այլ առիթով մը, Նուրիկեան իր «Նոր Գիր»-ին մէջ թիւը ամբողջովին նուիրեց Թիկատիկեանին, հեղինակաւոր գրիչներու աշխատակցութիւնը ապահովելով ատոր (1950, աշուն/մարտ):

Ծանօթ է որ Թիկատիկեանի Խարբերոյ մէջ կրցած էր խմորել գրասեր սերունդ մը, որ յետոյ լայն թելերով բացուեցաւ մեր գրականութեան ու դրոշմ դրաւ այնտեղ: Այդ սերունդին մաս կը կազմեն, Նուրիկեանէն գաւ, նաեւ Ռուբէն Չարդարեան, Վահէ Հայկ, Վահան Թոթովեց, «Ամերիկահայ Պատկերներ»-ու հեղինակը՝ Պետրոս Կեօլմիկ, հրապարակագիր Հրաչ Երուանդ եւ այլն:

Թիկատիկեանի, իր ամբողջ կը նկատուի գաւառի գրականութեան վարպետներէն մէկը, նաեւ՝ գլխաւոր տեսաբանը այդ գաղափարին: Մուշեղ Իշխան իր «Արդի Հայ Գրականութիւն» դասագիրքին մէջ (Բ. հատոր, Պեյրուս, 1974) կը հաստատէ. «Գրիչով ու խօսքով պայքարած է, որպէսզի հայ գրողը իր աչքերը դարձնէ դէպի հայ գիւղը եւ մշակէ հայեցի ոգիով նոր գրականութիւն մը, իսկ հայ մարդը չհեռանայ իր պապենական հողէն ու օճախէն:

Նախանձախնդիր է տոհմային աւանդութեանց պահպանման եւ այդ պատճառով ալ համակիր չէ անոնց, որոնք հայ հողէն, սովորութիւններէն եւ եկեղեցիէն կը բաժնեն հայր կամ կը քանդեն անոր կրօնական եւ բարոյական ըմբռումները»:

Մեզի համար շահեկան է իմանալ Նուրիկեանի յուշերն ու տպաւորութիւնները իր ուսուցիչին վերաբերեալ:

Այդ յուշերը կու գան 1910-1913-ի շրջանէն, երբ Բենիամին աշակերտեց Խարբերոյի Ազգ. Կեդրոնական վարժարանին, ժողովրդային բնորոշումով՝ «Թիկատիկեանի դպրոց»-ին:

Մեր սիրելի գրողը կը պատմէ, որ երբ գիւղին ծխական դպրոցը անարտեց՝ հայրը որոշեց զինք Խարբերոյ դրկել, Ազգ. Կեդրոնական վարժարանը ուսանելու համար: Վերամուտէն շաբաթներ առաջ՝ համագիւղացի հինգ ընկերներով ճամբայ ելան դէպի քաղաք: Երկու ժամ մտան Ս. Յակոբ եկեղեցւոյ բակը, ուր կը գտնուէր դպրոցը: Տնօրէն Յովհաննէս Էֆէնտին (իմա՝ Թիկատիկեան) եւ ուսուցիչներ կէս ժամ բերանացի քննութենէ անցուցին զիրենք. քիչ մը քերականութիւն, քիչ մը պատմութիւն, քիչ մը ալ կրօն: Արդիւնքները գոհացուցիչ եղան: Ընդունուած էին: Բայց տեսչարանէն դուրս գալէ առաջ, տնօրէն Թիկատիկեան կատարեց սա՝ հրահանգիչ թելադրանքը. «Հոս գեղ չէ, տղա՛ք: Սեպտեմբերին, դպրոց գալէ առաջ՝ չմոռնաք մագերիկը յապաւել...»:

- Հինգ ընկերներս ալ զարմացած,- կը գրէ Նուրիկեան,- մէկ անգամէն շօշափեցինք մագի առատութիւնը, որ կը դիզուէր մեր գիւղացիի գլուխներուն վրայ: Եւ բոլորս ալ, այդ օր, հայերէնի մեր առաջին դասը առինք Թիկատիկեանի՝ սորվելով իմաստը «յապաւել» բառին: Դաս մը, զոր պիտի չմոռնայինք երբեք:

Սեպտեմբերը եկաւ շուտով: Աշակերտները կենդանութիւն բերին դպրոցին: Հնչեց օրուան առաջին պահի գանգը: Կարդա՛նք Նուրիկեանը.

«Նստարանները գրաւուած են բոլորն ալ. տղաքը ցած ձայնով կը խօսին, կը կատակեն իրարու հետ: Դուռը կը բացուի: Ձայները կը մարին, դէմքերը կը լրջանան: Կամացուկ մը, կատուի քայլերով՝ ներս կը մտնէ ուսուցիչը, Յովհաննէս Էֆէնտին: Ոտքի վրայ են տղաքը, մէկ շարժումով, կարծես միեւնոյն զսպանակէն ազդուած:

- Բարի լոյս, տղա՛ք,- կ'ըսէ Թիկատիկեան, ժպիտը աչքերուն: Եւ ձեռքով նշան կու տայ որ նստին տղաքը: Հայրական բան մը կայ իր շարժումներուն ու իր նայուածքին մէջ. ժպիտին տակ անգամ՝ տղորտմութեան ցոլք մը կը պահէ կարծես: Հասակը միջակ է. միջակէն ալ քիչկ մը վար թերեւս:

- Պաշտօնապէս՝ «Գանձարան»-ն է ձեր դասագիրքը, Անտոնեանի կազմածը,- կ'ըսէ: Կը կարդաք զայն մաս առ մաս, եւ միասին կը խօսիք հոն տրուած կտորներուն եւ հեղինակներուն մասին: Բայց ես գրականութեան դասագիրքի չեմ հաւատար այնքան: Դասագիրքը մե՛նք ենք. ես եւ դուք, եւ կեանքը՝

որ կը յորդի մեր շուրջը, ամեն օր, ամեն վայրկեան»:

Անուանի ուսուցիչը անմիջապէս կը յիշեցնէ իր պատանի սաներուն, թէ ամեն շաբաթ շարադրութեան հերթական նիւթ մը պիտի տայ իրենց: Սակայն կ'ուզէ որ մոռնան «աստղերն ու լուսինը, վարդն ու սոխակը, եւ ոտքերնին դնեն իրական գետնի վրայ, կեանքի՛ գետնին վրայ»:

Քանի մը վայրկեան անց աշակերտները պիտի նկատէին, թէ Թիկատիկեան պատուհանին մօտենալով՝ իր հայեացքը սեւեռած կը պահէր դուրսի հեռաւոր մէկ տեսարանին վրայ: Ռ՞ով կրնար ենթադրել, թէ այդ տեսարանն ուսուցիչը դուրսի այդ տեսարանէն կը ջանար որսալ շարադրութեան նիւթ մը...: Ու գրատախտակին վրայ անմիջապէս կը գրէր. - «Գաւառացիին Տանիքը»: Ասիկա պիտի ըլլար դասարանին շարադրութեան առաջին նիւթը:

- Այս վերնագրով,- կը շարունակէ Նուրիկեան,- գաւառի գրականութեան մեր վարպետը քառասունհինգ վայրկեանի մէջ կու տար լման պատկերը դրացի տանիքին, զոր դիտած էր քիչ առաջ,- պլոլորն ու ծեծածը եւ քաղցրեղէնները՝ զորս գաւառացի տանիքինը պատրաստեր ու արեւին տակ հաներ էր այդ օրերուն. նոյն իսկ ճնճողակները, որոնք կու գային գողնալ իրենց կերը տանիքին վրայէն:

Թիկատիկեանի նիւթին ամփոփումը պատը կը գրէր՝ մարգարիտի հատիկներ յիշեցնող կոկիկ ձեռագրով: Տղաքը կ'ընդօրինակէին:

Յաջորդող դասապահերուն, երբ շարադրութեան կարգը կու գար դարձեալ, Թիկատիկեան միշտ կը կրկնէր իր թելադրանքը. - նիւթերը քաղել շրջապատէն:

Այսպէս, օր մը կ'ուզէր որ նկարագրեն քաղաքին այգեստանը, այլ օր մը՝ գերաններ շալկող բեռնակիրները, ուրիշ անգամ՝ ջրկիր Յակոբ աղբարը: Գրութիւնները տուն կը տանէր, կը սրբագրէր, յետոյ կը վերադարձնէր՝ բերանացի կամ գրաւոր թելադրանքներով: Կը գգուշացներ անձանկներու անտեղի ու առատ գործածութենէ: Երբեմն, իր գրած քրոնիկներէն ու թատերակներէն հատուածներ ալ կը կարդար դասարանին մէջ, որոշ մեկնաբանութիւններով: Կը կարդար նաեւ ժամանակակից գրողներէ, ինչպէս՝ Օշականի «Խոնարհներ»-էն:

Այս բոլորով՝ դասարանին մէջ կը ստեղծուէր գրական վարակիչ մթնոլորտ մը: Ինքնավստահ տղաքը կը սկսէին պատրաստել ձեռագիր թերթիկներ, որոնք ձեռք-ձեռք կը փոխանցուէին: Այդպիսի թերթիկ մըն ալ խմբագրէր էր ինք՝ Բենիամին Նուրիկեան, «Հասկեր» անունով, բաւական երկար շաբաթներ...: Իսկ Թիկատիկեան մասնաւոր հաճոյքով ու հպարտութեամբ կը նայէր այդ թերթիկներուն վրայ, զգալով որ գրական հունստ մը հետզհետէ կը սկսէր ծաղկիլ իր սաներուն հոգիին մէջ...:

Նուրիկեան դեռ կը պատմէ, որ հոգեր շա՛տ ուներ իրենց ուսուցիչը: Կար ընտանիքին ապրուստի հրամայականը (ուներ ինը գաւակ, կին Շար.՝ 12 11

Աշակերտական Անկիւն

ԱՍՏՂՍ



Աստղիկ Դանիելեան

Ինծի համար չկար անելի մեծ ուրախութիւն քան աստղեր դիտելը: Գիշերները անհամբեր կը սպասէի լուսնին ու աստղերուն երեւումին: Ես ունէի ի՛մ աստղը, շատ սովորական, բայց ինծի համար շատ հարազատ: Կ'ըսեն՝ ամէն անձ իր աստղը ունի: Ես ալ ունէի: Անկէկա միայն իմս էր: Ամէն գիշեր պատշգամ կ'ելլէի, ու աչքերս սեւեռած անոր՝ գայն կը դիտէի առանց ձանձրանալու, կամ բաւարարուելու: Ծատ կը սիրէի զինք: Թէեւ կար անելի փայլուն ու սիրունը, բայց իմս ինծի համար կը թուէր ամենէն սիրունն ու փայլունը:



Երբ ատեն-ատեն սեւ ամպերը կը փակէին աստղս, դարձեալ առանց ձանձրանալու կը սպասէի, թէ երբ անոնք պիտի հեռանան, որ նորէն տեսնեմ զինք:

Այդ աստղը ինծի համար մեծ արժէք ունէր: Ան զիս կը տանէր մտածումներու անսահման աշխարհ: Մտածումներ՝ երբեմն պարզ, երբեմն՝ բարդ:

Չիկը շա՛տ կը սիրէի: Բանի՛-քանի՛ գիշերներ լուսնուցած եմ անոր հետ, գայն դիտելով, առանց զգալու ժամանակին անցնիլը:

Օր մը, երկար սպասելէ ետք վերջապէս գիշեր եղաւ, բայց աստղս... չկար: Իմ հարազատ ու ամենասիրելի աստղս չկար ու չկար: Սեւ ամպերը ծածկեր էին զինք տեսողութենէ: Չուզելով մտածել, թէ ան այլեւս չկայ, աչքերս կրկին անգամ կը վերցնեմ երկինք: Օդը պայծառ է, ո՛չ ամպ կայ, ոչ ալ մշուշ, բայց աստղս չկայ:

- Արագ կը մտնեմ ներս ու մօրս կ'ըսեմ:
- Մա՛յր, աստղս չկայ: Եկուր տե՛ս, թերեւս դուն կը տեսնես:
- Մայրս ժպիտով կ'ըսէ:
- Կ'երեւի, անոր ժամանակը ալ վերջացած է:
- Վերջացա՞ծ, -կը քարանամ գարմանքս:

Յանկարծ կը զգամ, թէ շատ թանկագին բան մը կորսնցուցած եմ: Ան ի՛մ աստղն էր: Ամէն գիշեր կը դիտէի զինք, ու ինք՝ զիս: Իսկ հիմա...

Աչքերս կրկին կը վերցնեմ դէպի երկինք. ֓այլուն ու սիրուն շատ աստղեր կը պսպրան: Կը փնտռեմ իմինս, բայց ան չկայ այլեւս:

Այն ատեն կը հասկնամ, որ շուրջս հազարաւոր փայլուն աստղեր կան, նոյնիսկ իմինս անէլի փայլունները, բայց իմս տարբեր էր բոլորէն ինծի՛ համար: Թերեւս իմինս ալ շատերուն համար շատ պարզ աստղ մըն էր, եւ միայն ինծի համար այդպիսին չէր, չէր կրնար ըլլալ...

- Անկէ ի վեր դեռ կը փնտռեմ աստղս ու չեմ գտներ:
- Արդեօք ի՞նչ եղաւ...
- Ինչո՞ւ մարեցաւ...
- Օր մը կրկին կ'երեւի՞...

Քեսայի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան ԺԱ. կարգ

ՔՈՐՈՆԱ



Վիգի Նազարեան

Երկու հազար քսան թուականը իր հետ բերաւ չլսուած համաճարակ մը: Տարին հազիւ սկսաւ, լսեցինք որ նոր տեսակ ժահր մը տարածուած է շատ երկիրներու մէջ: Այդ ժահրին անունը Քորոնա է, հայերէսով՝ թագածեւ ժահր, կամ պսակածեւ ժահր: Երբ լսեցինք որ շուտ կը տարածուի՝ շատ վախցանք: Բայց եթէ մեր ծնողքին խօսքը մտիկ ընենք եւ գործադրենք՝ այս համաճարակը մեզի չի հասնիր: Պետք է հետեւիլք առողջապահական կանոններուն. պետք է տուն մնանք, իսկ եթէ դուրս ելլենք՝ պետք է ձեռնոց ղնենք, նաեւ քթակապ, որ ապահով ըլլանք: Յաճախ մեր ձեռքերը օճառով պետք է լուանք: Կ'ըսեն, թէ ժահրով կը վարակուին տկար դիմադրողականութիւն, ծանր հիւանդութիւն ունեցողները եւ նաեւ տարիքոտ անձեր: Այս վարակին հետեւանքով մենք դպրոց չենք երթար: Ամէն տեղ դպրոցները փակ են: Ես շատ կարօտցայ դպրոցիս: Կ'ուզեմ, որ բոլոր դպրոցականներս շուտ դպրոց վերադառնանք: Խօսքս կ'ուզեմ փակել այսպէս.

- Քորոնա՛, Քորոնա՛, մեզմէ հեռո՛ւ մնա,
- Դուն քեզ հաւաքէ ու հեռո՛ւ գնա:

Քեսայի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան Ժ. կարգ



ԱՄԵՆԱԿԱԼԷՆ ՈՒՂԱՐԿՈՒԹՆ ԵՎ ՆԱՄԱԿԸ



Պեթի Բիլերճեան

2017-ի Օգոստոսէն սովորութիւն դարձուցած էի Կիրակի օրերու առաջին քայլերս ուղղել դէպի մեր տան խոհանոցը, որուն պատուհանը կը նայի Սրբ. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ:

Այս Կիրակի ալ նոյնը ըրի, բայց հազիւ պատուհանին հասած պահ մը շարժեցայ, հակառակ Յիսուս Բրիստոսի հրաշափառ Յարութեան տօնին, եկեղեցին իր դռները փակ կը պահէր, մինչ պատերազմի ամենաբոք օրերուն այդ դուռը երբեք չէր փակուած իրեն փութացող հաւատացեալներուն առջեւ: Տակաւին մէկ շաբաթ առաջ՝ Ծաղկազարդին, թէեւ սակաւաթիւ, սակայն ընդունած էր իր գաւակները, նոյնիսկ երկու օր առաջ՝ Աւագ Ուրբաթ օրը, թէեւ դռները փակ էին, բայց գոնէ արարողութեան մեղեդիները եւ սրբազան հօր քարոզը կը լսէինք Նոր Գիւղի բնակիչներս մասնատրապէս ու համայն սփիւռքը ընդհանրապէս:

Ո՛ր են մանուկներուն կենսութիւնը, ո՛ր են տարեց մանկներուն ու պապիկներուն օրհնաբեր աղօթքներն ու մաղթանքները: Այս բոլորը հիմա կը բացակային, հիմա միայն մեռելային խոր լռութիւն կը տիրէ: Արդեօք մանր ու աննշան պսակածեւ ժահր կոչեցեալն է այս բոլորին պատճառը: Արդեօք մարդկութեան պատմութեան ընթացքին եղա՞ծ է նման պարագայ մը, երբ Տէրը իր դռները փակած է իր գաւակներուն առջեւ:

Եթէ այս հարցին քաղաքական ու տնտեսական տեսանկիւնէն անդին նայինք, արդեօք չենք գտներ, թէ Ամենակալը այս ձեւով կ'ուզէ բան մը հասկնել մեզի:

Սոյն ժահրը ապտակ մըն է երկրագունդի երեսին, որ կրցաւ ծունկի բերել աշխարհի հզօրները, նոյնիսկ գիտնականները շփոթի մատուցեցան: Այս բոլորը պատասխա՞նն է չարացած մեր կեանքին: Աշխարհի մէկ երրորդը կը գտնուի տուններուն մէջ՝ նախագգուշանալով ժահրին ազդեցութենէն: Կենաց մահու պայքար կը մղենք, միակ ապաւենը մեր



հաւատքն է, յոյսն է: Հասած է այն ժամանակը, երբ մեր տունները եկեղեցիներու պէտք է վերածել, ինքնավերլուծել մեր արարքները, վերամշակել մեր ծրագիրները: Ժամանակ տրամադրեց եւս բնութեան, որ յոգնութենէ կը տառապի ու կարիքը ունի հանգիստի:

Որքան ալ մարդը բարձր դիրքի հասնի, որքան ալ գիտութիւնը յառաջանայ, որքան ալ գերպատուութիւնները հզօրանան, բոլորն ալ շատ համեստ կը մնան Տիրոջ գօրութեան առջեւ: Պահն է լաւ ըմբռնելու համայն աշխարհին ուղարկուած նամակը, լաւ հասկնալու այդ նամակին բովանդակութիւնը ու գործելու անոր ցուցմունքներուն համաձայն: Այս մէկը յաւելեալ առիթ մըն է մարդկութեան, պետք չէ կորսնցնել այս առիթը այնքան ատեն որ տրամադրուած ժամանակը չէ աւարտած:

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ


Խմբագիր՝ Չարմիկ Զիլվերշեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Չեփիւռ Պապիկեան-Աւագեան
Յուշիկ Նազարեան

Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան
Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Խրոյեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլվերշեան
Հաշուապահ՝ Սեւակ Կիւլվանեսեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
 - Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
 - Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
 - Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
 - Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

Կամիթ

ՄԵՆՔ ՄԻՇՏ ՃՈՒՑ ԵՆՔ



Յովիկ Օհանեան

Այսօր Նոյնշաբթի ենք, արդեն թուական յիշելը անիմաստ է: Օրացոյցն ալ պսակածէ ժահրով վարակուած է եւ կը փորձէ բուժել ինքզինքը: Միայն գիտենք, որ մեր Հայ Առաքելական եկեղեցւոյ տոմարին համեմատ այս շաբաթ Աւագ Շաբաթ է, Յիսուս Քրիստոսի չարչարանքի շաբաթը, որուն ընթացքին բնականաբար բոլորս կը հրաժարինք մեր ամօրեայ ճոխ յայտագիրներէն, մանաւանդ Աւագ Ուրբաթ օրը:

Մինչեւ հոս Նորութիւն մը չկայ ըսածիս մէջ: Նպատակս Աւագ Շաբթուան խորհուրդներուն մասին քարոզներ կարդալը չէ, մեր հայր սուրբերը լի ու լի կը կատարեն այս մէկը, իսկ ես այդ մէկը ընելու ատակ չեմ:

Կրկին կ'ուզեմ լուսարձակի տակ առնել զիս եւ, կարծեմ մեծամասնութիւնը, հետաքրքրող նիւթ մը՝ մեր Հայ Առաքելական եկեղեցւոյ հարուստ շարականները: Անոնք կը տարբերին աղօթարաններէն կամ ժողովարաններէն Ներս Երզնուած երգերէն: Այս վերջին երկուքին տարբերութիւնն ալ ի՞նչ է՝ չեմ գիտեր... Կ'ենթադրեմ, թէ մէկը աղօթքի, միւսն ալ ժողովի վայր է:

Սիրելիներ, մեր Հայ Առաքելական եկեղեցին 1719-ամեայ եկեղեցի է եւ դարեր շարունակ գոյատեւած է, իր առաքելութիւնը կատարելով անխափան, հասնելով բոլորին՝ հակառակ ժամանակի դաւին... ուրեմն՝ մեր եկեղեցւոյ հայր սուրբերէն մեզի հասած, առանց չափազանցութեան, հազարաւոր շարականները դարերու կեանք ապրած են:

Այսօրուան պայմաններէն մեկնելով, հաւատացեալները կը հետեւին եկեղեցական արարողութիւններուն դիմատետրի ուղիղ եթերով:



Կ'ունկնդրենք մեր աղամանդեայ շարականները: Անոնք ուշադրութիւնս գրաւեցին աղօթարաններէն Ներս կատարուած «գեղարուստական յայտագիրներ»ը՝ սարքուած Քրիստոսի չարչարանքին առիթով: Որքան մեծ էր անոնց հետեւողներուն թիւը, մեծամասնութիւնը՝ երիտասարդներ:

Ընդունինք, որ մեր եկեղեցին աղքատացած է երիտասարդներէ, բայց անլուծելի հարց չկայ: Այո՛, Չատիկե-Չատիկ հագիւ կը տեսնենք երիտասարդները եկեղեցւոյ շրջափակէն Ներս: «*Ի ցոյց մարդկանց*», կ'ըսեն շատեր... եկեք մեկուն մեղքը չառնենք, Աստուած՝ գիտէ... ասո՛ր ալ փառք տակը:

Բայց, ո՞ր է երիտասարդութիւնը: Կ'ամ աղօթարանն է՝ կ'աղօթէ, կամ ալ ժողովարանը «ժողով» ունի: զԱստուած կը փառաբանեն ծափով, երգով ու պարով...

Կը ներքե, եթէ ձեր շարականը երգ անուանեցի: «Երգ» բառը երեք տառէ կը բաղկանայ, շա՛տ է Նոյնիսկ... Վերջերս «Խաչի Մօտ» «Երգ»ը անդադար կ'երգեն, վստահ շատերու ծանօթ է, եթէ ոչ՝ անպայման լսեցեք, տեսեք թէ որքան ճոխ կը խաչուի իրենց Յիսուսը: Ժամանակակից երաժշտական ոճը օգտագործելը մեր աղօթքներուն մէջ սխալ չէ, բայց ամեն բան իր կարգն ու կանոնը ունի եւ չափաւոր ըլլալը խոհեմութիւն է...

Եթէ անոնցմէ մէկը յանկարծ սխալիս ու եկեղեցի հրաւիրես, քանի մը յայտնի պատրուակներ կը լսես.

-Առաջին՝ «*Ես չեմ հասկնար կոր եկեղեցիին մէջ ինչ որ կ'ըսեն կոր*»:

Բարեկամ, դուն տարուան ընթացքին քանի՞ անգամ կու գաս եկեղեցի, որ գոնէ քիչ մը ականջներդ վարժ ըլլան գրաբարին: Կարծեմ թէ մկրտութենէդ ի վեր չես եկած...

-Երկրորդ՝ «*Մեռելոցային» բաներ լսելու, հոս մեր գովը աշխոյժ ծափերով, պարերով, ելեկտրոնային երաժշտական զանազան գործիքներով կը մօտենանք Աստուծոյ*»:

-Երրորդ՝... անելի լաւ կ'ըլլայ, որ երրորդը չըսեմ, թէ ոչ զիս ալ պիտի «փառաբանեն»:

Շատեր պիտի ըսեն, թէ եկեղեցին ալ յանցաւոր է, գէթ մասամբ

Ա՛Ն ԱՅՍ ԳԱՐՈՒՆԸ



Նորա Տանակեօզեան-Մանսուրեան

Այս գարունը ...
Թէ ինչպէ՛ս եկաւ,
Ինչպէ՛ս ծաղկեցաւ՝ ո՛չ ոք իմացաւ...
Բնութիւնը իր արդար ընթացքը չխախտեց
Ամպերը չուշացան գարնան յորդ անձրեւը ան աշխարհ ուղարկելէ:
Տակաւին գաղթած թռչունները կը վերադառնան եւ շատ հաւանական է որ հին բոյնը կարկտսեն կամ ինչու չէ, նաեւ նո՛ր մը շինեն:
Հողը իր բերքը կու տայ, ծառերը կը ծաղկին ամրան բերքը խոստանալու համար:

Այո, ամեն ինչ կարգին է...
Բայց մեր կեանքի թատերաբեմի ո՞ր մասը փոխուեցաւ, ի՞նչն էր այն անեծքը, որ մեզի գրկեց գարունը գրկելէ, կեանքի վերապրումը վերապրելէ, մեր կեանքն եւս վերստին ծաղկեցնելէ...



Գարուն ա , ձուն ա առել ...
Շատ գարուններ կու գան ու կ'անցնին հայուն կեանքին մէջ, բայց հարիրամեակ մը առաջ եկած գարունը թո՛ղ չկրկնուի անգամ մը եւս...

Այո, Հայոց Ցեղասպանութեան արիւնոտ գարունը:
Գիտե՞ք, տարիներ ետք այս գարնան մասին ե՛ւս Նոյնը պիտի ըսենք:
Թէեւ այս տարի թուրքի եթաթաղանջ չկայ, թէեւ գաղթի քարոտ ու փշոտ սովի ճամբան չկայ, բայց անյայտ ու անբացատրելի թագածախը իր գործը տեսաւ թուրքին նման:

Հագիւ Սուրիոյ տագնապէն խաղաղած, երբ խաղաղութեամբ պիտի անցնէինք անագ շաբթուան յիշատակելի՛ օրերը, երբ մեր վերականգնած եկեղեցիները անգամ մը ե՛ւս պիտի խճողուէին հաւատացեալներով, երբ ամեն օր անկրկնելի պիտի ըլլար նախորդին նման...

Տակաւին «Երբ» բառը երկար ու անհամար անգամներ պիտի կրկնէինք...

Ահա՛, այդ անմարմին պատուհասը մեզ կամաւոր կալանքի կ'ենթարկէ: Լա՛ւ, Նորէն լաւատեսութեամբ ըսենք՝ վերջը բարին թող ըլլայ:

Բայց չեմ կարծեր, որ այս օրերը պիտի կարենանք սրբել մեր յիշողութենէն:

Մոռնալ ձեւացնելով այս պատահածը, բաժակին լեցուն մասին մէջ ի՞նչ կրնանք գտնել:

Այո, շատոնց արդէն, իրարմէ հեռացած ընտանիքի անդամները կրկին միասին կ'ապրին, միասին կը ճաշեն, կ'ընթրեն, երբեմն կը խաղան, ինչու չէ՛ երբեմն ալ կը վիճին:

Կեանքը մեզի կը վերոյիշեցնէ իր փոշոտ էջերու ծալքերուն մէջ մրափող մոռցուած մեր երբեմնի կենցաղը:

Լա՛ւ անդադարձ մը կը թուի ըլլալ անցեալի բարի սովորութիւնները վերադարձնելը, նայինք անոնցմէ որո՞նք կրնան համընկնիլ քսանմէկերորդ դարու մեր թո՛հ ու բո՛հին:

Մնացէ՛ք տունը եւ վայելեցէ՛ք ընտանեկան ջերմութիւնը:

մը... Մեր ժողովուրդին բարի բնաւորութիւնն է՝ մէկը միւսին վրայ յանցանք կը նետէ եւ ինք կը հերոսանայ...

Մենք ինչքա՞ն յարգանք ունինք մեր եկեղեցւոյ եւ անոր կրօնաւորներուն հանդէպ: Քահանայ մը եթէ տեսնէք ճամբան, մեր ուղղութիւնը կը փոխենք, դժբախտաբար: Իրապաշտ ըլլալը այս օրերուն բոլորիս համար ամենաճիշդն է: Քոյր եկեղեցիներու մէջ կը տեսնենք ինչքան յարգանք ունին իրենց կղերականներուն հանդէպ, իսկ մե՞նք... փակենք նիւթը:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Պատրաստ եղեք անսպասելի նորություններու: Պետք է յարմարիք նոր պարագաներուն եւ փոխեք ձեր ծրագիրները:



ՏՈՒԼ

Դուք շատ լաւ լեզու կը գտնեք ուրիշներուն հետ, երբեմն գոհելով ձեր անձնական շահերը: Ձեր գոհողությունները ապարդիւն պիտի չմնան:



ԵՐԿՈՐԵԱԿ

Այս շաբաթ դժուար պիտի ըլլայ վեճերէն խուսափիլը: Կրնայ թուիլ, թէ ձեր շրջապատը դիտմամբ ձեզ կը հանէ հաւասարակշռութենէն:



ԽԵՑՁԵՏԻՆ

Եթէ լաւ գաղափարներ եւ համարձակ ծրագիրներ ունիք, մի՛ յետաձգեք անոնց իրականացումը: Այս շաբաթուան առաջին կեսը շատ աւելի բարենպաստ է, քան երկրորդը:



ԱՌԻՇ

Յարմար շաբաթ է նոր ծրագիրներ մշակելու եւ կարելորոշումներ գոյացնելու համար: Դուք ճիշդ կը գնահատեք թէ՛ ձեր ուժերը, եւ թէ ստեղծուած իրավիճակը:



ԿՈՅՍ

Պիտի կարենաք յաջողութեամբ լուծել այն հարցերը, որոնք կապուած են տունը մնալով սահմանափակ եկամուտ ունենալու հետ: Գիտեք, թէ որու կարելի է վստահիլ, իսկ որու՝ ոչ:



ԿՇԻՈՔ

Բարենպաստ շաբաթ է: Կարելի է վերադառնալ անաւարտ մնացած գործերու: Կարելիութիւն պիտի ունենաք յաջողութեամբ աւարտելու զանոնք:



ԿԱՐԻՃ

Շաբաթուան սկիզբը աւելի բարենպաստ պիտի ըլլայ: Յատկապէս հեզասահ պիտի ընթանան այն գործերը, որոնք կը պահանջեն ստեղծագործ մտեցում:



ԱՂԵՂԱՍՈՐ

Առիթ պիտի ունենաք լուծելու այն հարցերը, որոնք կարելոր են թէ՛ ձեր, եւ թէ ձեր սիրելիներուն համար:



ԱՅԾԵՂՋԻՐ

Ձեր նախաձեռնություններով պիտի յաջողիք համոզել զանոնք, որոնք վերջերս ձեզի հանդէպ թերահաւատ էին:



ՋՐՂՍ

Դասաւորեցեք ձեր առաջնահերթությունները: Կեդրոնացեք կարելոր գործերուն վրայ եւ փորձեցեք յանձնուիլ, ինչ ալ պատահի:



ՋՈՒԿ

Այս շաբաթ ձեր սխալելու հաւանականությունը մեծ է: Պետական կողմերու հետ ձեր գործերը ձախող կրնան ընթանալ, համբերող եղեք:



Ճաղիկ Գաբրիէլեան Սննդագետ

ՏՈՒՆԸ ՄՆԱԼ, ԲԱՅԾ ԶԳԻՐՆԱԼ

Այս շրջանին պսակածէ ժահրին պատճառով դժուարություններուն հետեւանքով բոլորս ստիպուեցանք տունը մնալ, ինչ որ պաճառ դարձաւ մեր շարք մը սովորություններու փոփոխութեան: Յաճախակի կերպով սկսանք օգտագործել արտաժայթ բացող եւ մեզ գբաղեցնող ուտելիքներ, ինչպէս օրինակ (չիփս, անուշեղէն, տապկոց եւ այլն): Տուն մնալը ազդեց նաեւ մարզիկներուն վրայ, որովհետեւ անոնք տուններէն ներս մարզանք չէին ընէր, այնպէս ինչպէս վարժուած էին:

Տունը նստիլը, սակայն, բացառիկ առիթ է, որ պետք է օգտագործենք մեր առողջութիւնը բարելաւելու համար: Օրինակ՝ անոնք որոնք մարզանք չեն ընէր կամ չեն գործածէր իրենց պետք եղած դեղերը կանոնաւոր ձեւով, կամ անոնք որոնք կ'ուզէին իրենց ծանրութիւնը նուազեցնել կրնան կանոնաւորել իրենց առօրեան եւ հասնիլ իրենց նպատակին:

Այս շրջանին հիմնական է մարզանքին ժամանակ տրամադրելը: Նախընտրելի է որ մեր օրը սկսիք մարզանքով, մասնաւոր անոնք, որոնք կը տառապին քրօնաթորութիւն (մաղձաճարպ), թրիկլետերիտէ, շաքարախտէ, կամ անոնք, որոնք մեծաքանակ ճարպ ունին կուտակուած իրենց լեարդին շուրջ (non alcoholic fatty liver disease) կամ փորին մասը: Անոնք բոլորը մեծապէս պիտի օգտուին առտու անօթի փորով մարզանք ընելէն, որովհետեւ առտու մեր մարմինը սպառած կ'ըլլայ արեան մէջ գտնուած շաքարը եւ կը սկսի օգտագործել ամբարուած շաքարը, որ կը գտնուի




կլիքնոճէլի ձեւով լեարդին եւ մկաններուն մէջ: Երբ սպառի այս ամբարուած շաքարն ալ, մարմինը պիտի սկսի օգտագործել ճարպերը ներուժ ստանալու համար, այսինքն՝ ոչ միայն կ'օգտուի ինչ որ նուազեցնելու մեր ծանրութիւնը, այլեւ մաղձաճարպը, թրիկլետերիտը, շաքարի քանակը, ինչպէս նաեւ լեարդին շուրջ կուտակուած ճարպերը նուազեցնելու համար: Շատեր հաւանաբար մտածեն, թէ չեն կրնար իրենց առօրեան սկսիլ առանց սուրճ խմելու, հարց մը չկայ, ընդհակառակը՝ սուրճը կը նպաստէ, որ անհատը աւելի աշխուժ եւ ընդունակ ըլլայ մարզանքի:

Նախընտրելի է արթննալէ ետք խմել մէկ գաւաթ ջուր, ապա՝ սուրճ եւ անկէ ետք մարզանք ընել՝ մօտաւորապէս կէս ժամէն 40 վայրկեան: Անշուշտ եթէ տունէն դուրս գալը եւ քայլելը դժուար է, կրնանք համացանցէն գտնել պահանջուածը, յատկապէս հետեւելով walk at home կոչուած մարզանքի ձեւերուն: Այսպէս կը յաջողիք մարզանքը մեր առօրեային անբաժան մասնիկը դարձնել: Երբ ճիշդ ձեւով մարզանք ընենք,

կրնանք օգնել մեր մարմնի մկաններուն, որպէսզի անոնց քանակը չնուազի: Օրինակ՝ կարելի է 20 վայրկեան ծանր մարզանքը փոխարինել 40 վայրկեան թեթեւ (Cardio) մարզանքով, այսպիսով կ'այրենք մարմնին ճարպը պահելով մկանին քանակը:

Մարզիկներուն, որոնք ընդհանրապէս կը յաճախէին մարզանքի սրահներ, սպիտին (փորթիլին)



առօրեայ կարիքը 1-1,3 կրամ է: Դժբախտաբար մեծամասնութիւնը կ'առնէ շատ աւելի մեծ քանակով սպիտ (փորթիլին), ենթադրելով որ այդպիսով պիտի աւելնայ մկաններուն քանակը: Ասիկա սխալ ենթադրութիւն է, որովհետեւ երբ սպիտին քանակը մարմնին կարիքէն աւելի կ'ըլլայ, ան կը վերածուի ճարպի: Անշուշտ այս շրջանին պետք է պակսեցնել սպիտին քանակը, որովհետեւ մարզիկը տունը նստելով մեծ քանակով սպիտի պետք չունի: Իսկ այն անձերու պարագային, որոնք կը գործածէին սպիտի տեսակներ, կրնան պարզ տեսակները շարունակել: Եթէ անոնք կը գործածէին, գործիական BCCA (Branched Chain Amino Acids) կամ creatin, այս շրջանին պետք է զանց առնեն զանոնք, որովհետեւ մկանները ծանրաբեռնող մարզանք չեն ընէր:

Առողջապահական մեկուսացման պայմաններուն տակ շատեր սկսած են ուտել իրենց սովորականէն աւելի ոչ-առողջապահական ուտեստներ, օրինակ չիփս, տուրմ, անուշեղէն, տապկոց եւ այլն, պարզապէս գբաղումի համար: Այս մէկը շատ սխալ է, որովհետեւ տունը մնալը առիթ է մեզի եփելու եւ պատրաստելու առողջապահական ճաշեր: Սկսիք ուտել աւելի մեծ քանակով պտուղ կամ խմել թարմ պտուղի հիւթ, բայց ամենակարելորդ այն է, որ մեր առօրեայ ուտելիքը պետք է ըլլայ մեր սովորական ուտելիքէն 30 առ հարիւր պակաս, որովհետեւ մեր շարժումը պակաս է, այսինքն պետք է մեր ստացած քալորիները 30 առ հարիւր համեմատութեամբ պակսին:

Ծանրութիւն նուազեցնելու հիմնական գործօն է նաեւ հոգեկան վիճակը: Շատեր տունը կը մասնատուի հագուստներով եւ չեն գաղթէ իրենց ծանրութիւնը որքան աւելցած: Այս պատճառով քաջալերելի է, որ բոլոր կիները, որոնք տունը նստած են առաւօտուն, արթննալէն ետք, հագուիս այնպէս, ինչպէս գործի կամ որեւէ այցելութեան երթալու ատեն պիտի հագուէին, որպէսզի կարենան հսկողութեան տակ պահել իրենց ծանրութիւնը:

Առողջապահական մեկուսացման շրջանին կարելոր է մարզանք ընել, խմել առատ ջուր, բարձր պահել մեր տրամադրութիւնը, հեռու մնալ գիրցնող ուտելիքներէ, որոնք կը պարունակեն մեծաքանակ ճարպ եւ շաքար, որպէսզի կարենանք առողջ պահել մեր մարմնին ու հաւասարակշռել մեր ծանրութիւնը:



Ռաֆֆի Սիկահեան

ՀԱՅԿԱԿԱՆ

ԼԵՌՆ ԱՐՈՆԵԱՆ ՊԻՏԻ ՉՄԱՍՆԱԿՅԻ ՃԱՏՐԱԿԻ ԱՌՅԱՆՑ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ

Կիրակի օր յստակացաւ ճատրակի աշխարհի գործող ախոյեան Մակ-տուս Զարլսընի նախաձեռնութեամբ կազմակերպուած առցանց *տուփըր*-մրցաշարքի մասնակիցներուն ցանկը: Նորվեկիացի ճատրակ խաղացողին հետ գլխաւոր մրցանակի համար պայքար կը մղեն ամերիկացի կրանտ մասթըր Ֆապիանօ Կարուանան (ԱՄՆ), Տին Լիթենը (Չինաստան), Եան Նեպոմնեաշչին (Ռուսիա), Մաքսիմ Վաշիէ-Լակրաւը (Ֆրանսա), Անիշ Գիրին (Յոլանտա), Յիկարու Նակամուրան (ԱՄՆ) եւ Ալիրեգա Ֆիրուշան (Իրան): Մակտուս Զարլսընի կողմէ հրաւեր յղուած էր Նաեւ Հայաստանի հաւաքականի խաղացող Լեւոն Արոնեանին, սակայն մեր հայ կրոսմայսթըրը կնոջ՝ Արիանա Զաոյիլիէի մահուան պատճառով մերժած է առաջարկը: Անոր պիտի փոխարինէ իրանցի մարզիկը:



ցած անհաճոյ դէպքերը: Ակումբի վարչակազմին մէջ գոյութիւն ունեցած է անհամերաշխ մթնոլորտ, որուն հետեւանքով հրաժարած են վեց վարչականներ: Վարչականները համաձայն չեն ակումբի նախագահ Պարթեմիոյի ընթացքին, որովհետեւ ըստ անոնց, ակումբի նախագահը իր որոշումները կ'առնէ առանց յարգելու ժողովական ընկերներուն կարծիքը: Աւելցնենք, որ հրաժարող վարչականներն են՝ Սիլվիօ Էլիաս, Էմիլի Ռոսոտ, Էնրիքէ Թոմպաս, Խուսէի Պոնտ, Խորտի Զալսամիլիա եւ Մարիա Թեքսիտըր:



ՌՈՆԱԼՏԻՆԻՍԸ ՊԻՏԻ ՄՆԱՅ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

Պրագիլի հաւաքականի եւ Պարսելոնայի նախկին խաղացող Ռոնալտիսին անցեալ շաբթուան ընթացքին դուրս ելաւ բանտէն, բայց ան պարտաւորուած պիտի մնայ կալանքի տակ: 40-ամեայ ֆութպոլիստը, յառաջիկայ օրերուն վեց ամսուան տեւողութեամբ կալանքի տակ պիտի մնայ հինգ աստղանի հիւրանոցի մը մէջ: Ան մեկուկէտ ամիս առաջ բանտարկուեցաւ Փարակուէի բանտերէն մեկուն մէջ, կեղծ անձագիր կրելուն պատճառով:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԹՈՅԵՆՀԱՄԸ ՄԵՃ ԳՈՒՄԱՐ ՊԱՅԱՆՁԵՑ ԸԵՅՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Անգլիական Թոթեմհեմը կարելիութիւն ունի մեծ գումարով վաճառել խումբին յարձակողական խաղացող Յերի Բէյլը: Ըստ Daily Mail-ի տեղեկութիւններուն, Թոթեմհեմի ակումբին հետ բանակցութիւններ կը վարեն Մանչեսթըր Իւնայթըտը եւ Սպանիոյ մայրաքաղաքի Ռեալ Մատրիտը: Աղբիւրին համաձայն, Բէյլի վաճառումի սակ նախատեսուած է 270 միլիոն եւրօ, եւ ակումբը այս որոշումը առած է, որովհետեւ պսակածէ ժահրի համաճարակին պատճառով նիւթական մեծ վնասներ կրած է: Աւելցնենք, որ ամիս մը առաջ Բէյլ դիմատետրի իր էջին վրայ գրած էր, որ կ'ուզէ լքել ակումբը՝ խումբին ոչ մէկ յառաջդիմութիւն արձանագրելուն համար: Յերի Բէյլ Թոթեմհեմին միացած էր 2011-ին: Անոր պայմանագրութիւնը կ'աւարտի 2024-ին:



ՀԱՄԻՍ ՌՈՏՐԻԿԵՍ ՊԱՅԱՆՁՈՒԾ Ե ԵՐԿՈՒ ԱԿՈՒՄԲԵՐԸ

Ռեալ Մատրիտի քոլումբիացի յարձակող Համիս Ռոտրիկեսի գործաւալը բանակցութիւններ կը վարէ եւրոպական երկու ակումբներու հետ: Սպանական AS-ը գրած է, որ ֆութպոլիստին գործակալ ժորժ Մենտեշ արդէն իսկ սկսած է բանակցութիւնները երկու ակումբներու՝ անգլիական Մանչեսթըր Իւնայթըտի եւ իտալական Իվենթուսի հետ: Նախապէս միջազգային թերթեր գրած էին, որ Ռեալի գլխաւոր մարզիչ Զինետտին Չիտան խումբին մէջ պետք չունի Ռոտրիկեսին եւ ակումբը մտադիր է վաճառել քոլումբիացի խաղացողը: Աւելցնենք, որ Ռոտրիկես սպանական խումբին միացաւ 2014-ին, բայց ան 2017-2019 որոշ գումարի փոխարէն տեղափոխուեցաւ Գերմանիոյ Պայերն Միւնխի:



ՊԱՐՏԵԼՈՆԱՅԻ ՎԵՑ ՎԱՐՉԱԿԱՆՆԵՐ ՀՐԱՄԱՐԵՑԱԼ

Վերջին շրջանին միջազգային գլխաւոր լուրերուն մէջ տեղ գտան Սպանիոյ ախոյեան խումբին՝ Պարսելոնայի, շրջապատին մէջ տեղի ունե-

ԳՐԱԳԵՏ...


Սիկիզ' էջ 7

ու ծերունի մայր մը), կար դպրոցին նիւթական ու բարոյական հոգը (ընկերոցը գոյատեւումի լուռ պայքար կը մղէր Խարբերդի միսիոնարական կրթարաններուն դէմ), կար իր գրական աշխատանքներուն մղում տալու ցանկութիւնն ու կիրքը, որոնք

յաճախ կը շլատուէին դպրոցին այլատեսակ հոգերուն տակ: Այս բոլորը՝ «առնուազն երեք մարդու կամքն ու ժամանակը կը պահանջէր»: Ահա՛ այսպիսի մարդ մըն էր Թլկատիկի: Այսպիսի մտորանք մըն էր «Թլկատիկիի դպրոցը»՝ հայութեամբ խայտացող երբեմնի Խարբերդի Ս. Յակոբայ թաղին մէջ... (Շարունակելի - 4)

Թիւ 3

Աւարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:



Նախորդ Թիւի Պատասխանն է a 8 #

ԵՐԿՈՒՆԵՐՈՒ 30/3	ԵՐԵՐԵՐՈՒ 31/3	ՉՈՐԵՐԵՐՈՒ 1/4	ՀԻՆՈՒՆԵՐՈՒ 2/4	ՈՐՐԵՐՈՒ 3/4	ՇԱՐՐՈՒ 4/4	ԿԻՐԱԿԻ 5/4
8° 18°	9° 19°	9° 19°	8° 20°	10° 21°	12° 22°	12° 23°

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՌԱՋԻՆ ԱՆՎԱՍ ԸԼԱՆՈՎ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ Կ՛ՈՒՆԵՆԱՆ ԴՈՒՓՈՎ ԵՒ ՈՒՂԻՂ ՍՓՈՒՄՈՎ (ՀԱԼԷՊ, ՃԵՉԻՐԷ, ՔԵՍԱՊ, ԾՈՎԱՓԵՆԱՅ ՇՐՋԱՆ)

Մեծ Պահոց օրհնաբաշխ օրերու եկեղեցական արարողությունները 2020-ին սկիզբ առին հոգեթով մթնոլորտի մեջ, հաւատացեալներու հոծ ներկայութեան: Սակայն մարդկութեան կեանքին սպառնացող պահանջներու ժառանգական տարածումը խափանեց հաւաքական բոլոր նախաձեռնութիւններուն ընթացքը: Կրօնական ժողովի դիւանին 14 Մարտ 2020-ին հրապարակած յայտարարութենէն իրազեկ դարձանք, որ թեմի բոլոր եկեղեցական արարողությունները պիտի կատարուին հոգեւորականներու եւ սակաւաթիւ սարկաւազներու ներկայութեան, առանց ժողովրդային մասնակցութեան:

ՀԱԼԷՊ

Յարմարելով նոր պայմաններուն, շաբաթական հերթով, Առաջնորդ Սրբազան Զօր հանդիսապետութեամբ, թեմի քահանայ հայրերը մէկտեղ համախմբուած Մեծ Պահոց Արեւագալի եւ հսկումի ժամերգությունները շաբաթական մատուցել դռնփակ եւ ուղիղ սփռումով, յոյս եւ հաւատք ներշնչելով իրենց տուներէն հետեւող հաւատացեալներուն:



Առցանց հեռարձակումներով, նախապէս յայտարարուած ժամկետներով եկեղեցիներու դիմատետրի էջերուն ճամբով սփռուեցան հետեւեալ եկեղեցական արարողությունները:

- Կիրակի, 22 Մարտ 2020-ին Սուրբ եւ Անմահ Պատարագով յիշատակուեցաւ Սրբոց Զառնասից Մանկանց տօնը Մայր եկեղեցւոյ մէջ: Իր անդրանիկ պատարագը մատուցեց եւ օրուան քարոզը տուաւ՝ քառասուրբայ պահեցողութեան շրջանը ամբողջացուցած նորած Զահանայ Արժ. Տ. Սուրբէն Զհնյ. Արսլանեան:

- Կիրակի, 29 Մարտ 2020-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Մուտն ի Կիրապ տօնին, յիշատակուեցաւ Նոր Գիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ անուանակոչութիւնը: Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց Արժ. Տ. Խորեն Զհնյ. Պերթիգլեան: Օրուան Խորհուրդը ուղղեց Առաջնորդ Սրբազան Զայրը:

- Կիրակի, 5 Ապրիլ 2020-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Ծաղկազարդի տօնին նուիրուած Ս. եւ Անմահ Պատարագ եւ Դռնբացեցի արարողութիւն, հանդիսապետութեամբ Բերիոյ Զայր թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի: Պատարագիչն էր Արժ. Տ. Նարեկ Ա. Զհնյ. Չերեւեցեան: Առաջնորդ Սրբազան Զայրը առցանց սփռումով հետեւող հաւատացեալներուն ուղղեց Ծաղկազարդի տօնին իր պատգամը: Պատարագէն ետք, Առաջնորդ Սրբազան Զայրը հանդիսաւոր թափօրով ուղղուեցաւ դէպի եկեղեցւոյ շրջափակ, ուր օրհնեց ծիթենիի ճիւղերը եւ ձեռամբ գանոնք բաշխեց եկեղեցի ներկայացող խումբ մը հաւատացեալներուն: Այնուհետեւ Սրբազան Զայրը մեկնելով Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, ապա Սրբոց Զառնասից Մանկանց Մայր եկեղեցի հոն եւս իր օրհնութիւնները տուաւ եւ անձամբ ծիթենիի ոստեր բաշխեց ներկայացող փոքրաթիւ հաւատացեալներուն:

Մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի չարչարանքներուն նուիրուած աւագ շաբաթը յիշատակուեցաւ հոգեպարար եկեղեցական արարողություններով:

- **Աւագ Զինգաբթի**, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցան հետեւեալ արարողությունները:-

Ա. Սուրբ Զաղորդութեան Խորհուրդի հաստատման նուիրուած Պատարագ, առաւօտեան ժամը 10:00-ին: Ս. եւ Անմահ Պատարագը մատուցեց Արժ. Տ. Խորեն Զհնյ. Պերթիգլեան: Այնուհետեւ, Ս. Բարսեղ հայրապետին աղօթքը ընթերցեց Զոգշ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեան:

Բ. Կարգ Ոտնկուայի, կէսօրէ ետք ժամը 4:00-ին, գլխաւորութեամբ Զոգշ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեանի, որ Զրիստոսի հեգուրութեան եւ խոնարհութեան օրհնակին հետեւելով, եկեղեցւոյ խորանին առջեւ ծնկաչոք՝ քահանայ հայրերուն եւ սարկաւազներուն ոտքերը լուաց եւ իւղով օծեց: Զայր սուրբը ներկայացնելով օրուան խորհուրդը հրաւիրեց հաւատացեալները մաքրելու իրենց հոգիներն ու միտքերը:

Գ. Կարգ Զարչարանաց (Խաւարման գիշեր), երեկոյեան ժամը 6:00-ին: Օրուան խորհուրդը արտասանեց Արժ. Տ. Խորեն Զհնյ. Պերթիգլեան, յայտնելով, որ եկեղեցական այս արարողութիւնը յիշատակումն է Զրիստոսի փրկարար չարչարանքներուն: Զահանայ հայրը հրաւիրեց հաւատացեալները Խաչին խորհուրդը հասկնալու համար հաւատք ունենալ եւ աստուածային սիրով լեցուիլ:

- **Աւագ Ուրբաթ**, մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի Թաղման Կարգը տեղի ունեցաւ Ուրբաթ, 10 Ապրիլ 2020-ին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Օրուան խորհուրդը ուղղեց Առաջնորդ Սրբազան Զայրը, բնութագրելով Զրիստոսի եռամեայ քարոզչութեան աւարտին տեղի ունեցած զարմանալի դէպքերը, յայտնելով, որ Զրիստոս եկաւ խաղաղութիւն հաստատելու, սակայն զարմանալի վերաբերմունքի արժանացաւ զինք շրջապատող մարդոց կողմէ: Նոյնիսկ Զրիստոսի աշակերտները, որոնք ականատես վկաները եղան իր հրաշագործութիւններուն, առանձին ձգեցին եւ ուրացան զինք:

Սրբազան հայրը դիտել տուաւ, որ թէեւ Զրիստոսի խաչելութեան եւ

մահուան դէպքերը սուգի եւ տառապանքի պահեր են, սակայն քրիստոնեայ հաւատացեալներուն համար ուրախութեան օր է, որովհետեւ Զրիստոսի խաչելութեամբ, մահուամբ եւ ապա յարութեամբ մեր հոգիները փրկուեցան:

- **Աւագ Շաբաթ**, ճրագալոյցի Պատարագ տեղի ունեցաւ Շաբաթ, 11 Ապրիլ 2020-ին, կէսօրէ ետք ժամը 4:00-ին, Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ: Օրուան պատարագիչն էր Արժ. Տ. Գառնիկ Զհնյ. Չափանեան: Պատարագի աւարտին Առաջնորդ Սրբազան Զայրը եւ քահանայ հայրերը «Այսօր Յարեաւ Ի Մեռելոց» շարականի երգեցողութեամբ աւետեցին Զրիստոսի հրաշափառ յարութեան աւետիսը:

- **Յիսուս Զրիստոսի հրաշափառ յարութեան տօնը** յիշատակուեցաւ Կիրակի, 12 Ապրիլ 2020-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, Սրբոց Զառնասից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ: Զանդիսաւոր թափօրով եւ «Զրաշափառ»ի երգեցողութեամբ Բերիոյ Զայր թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան Ազգ. Առաջնորդարանէն ուղղուեցաւ դէպի Մայր եկեղեցի: Սուրբ եւ Անմահ Զանդիսաւոր Պատարագ մատուցեց եւ Ս. Յարութեան տօնի իր պատգամը տուաւ Առաջնորդ Սրբազան Զայրը, յայտարարելով հրեշտակին բերած աւետիսը մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի յարութեան մասին. «Ինչո՞ւ ողջը մեռելներուն մէջ կը փնտռեք: Զոս չէ՛ Ան. յարութիւն առաւ» (Ղկ 24.5):

Սրբազան հայրը դիտել տուաւ, որ յարութեան առաւօտը սովորական առաւօտ մը չէ, այլ յաղթանակի առաւօտ է, ուրախութեան եւ ցնծութեան առաւօտ է, փառք եւ գոհութիւն յայտնելու առաւօտ է, հոգիներու յաղթանակի եւ փրկութեան, բարոյական արժեքներու յաղթանակի, յոյսի, սիրոյ, կեանքի, աղօթքի եւ վերջապէս հաւատքի վերակենդանութեան առաւօտ է, որովհետեւ մեր Տերը Յիսուս Զրիստոս յարեաւ ի մեռելոց:

Պատարագի աւարտին Սրբոց Զառնասից Մանկանց Մայր եկեղեցւոյ մատրան առջեւ Ս. Յարութեան բերկրալի շարականներով Առաջնորդ Սրբազան Զայրը, հոգեւորականաց դասը եւ սարկաւազները աւետեցին Զրիստոսի հրաշափառ յարութիւնը:

Յիշեմք, որ Առաջնորդ Սրբազան Զայրը նախագոյնական պայմանները յարգելով Ս. Յարութեան տօնին շնորհաւորանք չընդունեց:

Մեռելոց յիշատակին Զոգեհանգստեան Պատարագ տեղի չունեցաւ, սակայն Կրօնական ժողովի յատուկ կարգադրութեամբ, մէկ շաբթուան տեւողութեան, քահանայ հայրերու հերթական ներկայութեամբ այցելութեան ժամեր ճշդուեցան, Ազգ. Գերեզմանատուն այցելող հաւատացեալներուն բազմութիւնը թեթեւցնելու համար:

ՃԵՉԻՐԷ

Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, Ճեչիրէի Առաջնորդական Փոխանորդ Զոգշ. Տ. Լեւոն Կրդ. Եղիայեան մատուցեց Ծաղկազարդի, Աւագ Շաբթուան, Սուրբ Յարութեան տօնին եւ Ազգ. Գերեզմանատան մէջ մեռելոց յիշատակին նուիրուած եկեղեցական հոգեպարար արարողություններ՝ դռնփակ եւ առցանց սփռումով:



ՔԵՍԱՊ

Ս. Յարութեան տօնի նախօրեակին Առաջնորդ Սրբազան Զօր յատուկ կարգադրութեամբ Քեսապ մեկնեցաւ Առաջնորդի Օգնական Զոգշ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեան, ընկերակցութեամբ Արժ. Տ. Նարեկ Ա. Զհնյ. Չերեւեցեանի: Ս. Յարութեան տօնին, Կիրակի, 12 Ապրիլ 2020-ին հայր սուրբը Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ մատուցեց Ս. եւ Անմահ Պատարագ՝ դռնփակ եւ ուղիղ սփռումով, իսկ Երկուշաբթի 13 Ապրիլ 2020-ին՝ Զոգեհանգստեան պաշտօն:



ԾՈՎԱՓԵՆԱՅ ՇՐՋԱՆ

Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ եւս Ծաղկազարդի, Աւագ Շաբթուան եւ Սուրբ Յարութեան տօնին նուիրուած եկեղեցական արարողություններ տեղի ունեցան, Լաթաքիոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վազգէն Զհնյ. Զեօշկերեանի մատուցմամբ:

Ներկայիս տիրող յայտնի պատճառներով թեմի կարգ մը շրջաններուն մէջ պատարագներ չմատուցուեցան՝ ճամբորդութեան դժուարութեան պատճառով:

Թող որ Զրիստոսի յարութեամբ մեր կեանքէն վերանան բոլոր տեսակի ախտերը եւ հաւատքով գորացած վերագտնեք մեր բնականոն կեանքը:

